ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ, ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՌԷԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ տնօրեն Լոռգամ Հովհաննիսյան

Բովանդակություն

1.Ընդհանուր տեղեկատվություն 4

2. Հիմնադրութային փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը և առնչվող այլ իրավական ակտերը 4

2.1 Հայաստանի Հանրապետության հիմնադրութային փաստաթղթին առնչվող միջազգային օրենսդրություն 4

2.2 Հայաստանի Հանրապետության ոլորտը կարգավորող իրավական ակտերը 7

3. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրութային փաստաթղթի ՌԷԳ գործընթացին կարգավորման հիմքերը. 10

4. Հիմնադրութային փաստաթղթի համառոտ նկարագիրը, նպատակը, իրականացման ժամկետը, կապը և (կամ) համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված այլ առնչվող հիմնադրութային փաստաթղթերի հետ. 13

5. Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեության բնութագրերը 15

5.1 Ֆիզիկական բնութագրերը: 15

5.2 Ռեսուրսային պահանջները: 15

5.3 Օգտագործվող նյութերի բնութագրերը: 16

5.4 Տեխնոլոգիական գործընթացների բնութագրերը. 16

6. Հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագիրը և դրանց հնարավոր փոփոխությունը՝ առանց հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման. 17

6.1.Հնարավոր ազդեցության ենթակա տարածք. 17

6.2. Շրջակա միջավայր. 19

6. 2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը 19

6.2.2Սեյսմիկա և երկրաբանություն. 21

6.2.3 Կլիմա և օդային ավազան 22

6.2.4. Հողային ռեսուրսներ 27

6.2.5 Ջրային ռեսուրսներ 28

6.2.6. Կենսաբազմազություն 30

6.2.7 Պատմության և մշակութային հուշարձաններ 34

6.2.8. Հատուկ պահպանվող տարածքներ 36

7. Բնակչության առողջության և անվտանգության, սոցիալական գործոնները և խնդիրները 37

8. Հիմնադրութային փաստաթղթի մոտեցումների բոլոր հնարավոր տարբերակների (այդ թվում՝ զրոյական) համեմատությունը և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորումը. 42

9. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հիմնադրութային փաստաթղթի դրույթների հնարավոր ազդեցության մասշտաբները. Հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության հետևանքով հնարավոր ազդեցությունների շրջանակները. 50

9.1. Օդային ավազան. 50

9.2.Հողային ռեսուրսներ. 51

9.3.Ջրային ռեսուրսներ 51

9.4. Կենսաբազմազանություն. 51
9.5. Թափոններ. 52
9.6.Պատմամշակութային և բնության հուշարձաններ. 52
9.7 Արտակարգ իրավիճակներ. 53
9.8 Աղմուկ. 53
9.9 Մարդու առողջություն և անվտանգություն. 53
9.10 Լանդշաֆտ.Բարեկարգում. 54
10. Հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց արդյունավետությունը, բավարարությունն ու ծախսերը. 54
10.1 Օդային ավազան. 55
10.2. Ջրային ռեսուրսներ. ջրային ռեսուրսների ազդեցությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել. 55
10.3. Հողային ռեսուսրներ. հողային ռեսուրսների պահպանման նպատակով անհրաժեշտ է նախատեսել. 55
10.4. Կենսաբազմազանություն. 55
10.5. Թափոն. թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել. 56
10.6.Պատմամշակութային և բնության հուշարձաններ. 56
10.7. Արտակարգ իրավիճակներ. արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել. 56
10.8. Աղմուկ և թրթռում. 56
10.9. Մարդու առողջություն և անվտանգություն. 57
10.10 Սոցիալական գործոններ. ՌԷԳ հաշվետվության շրջանակներում ներկայացվող ծրագրի իրականացումը համայնքի և բնակավայրի համար կունենա սոցիալական դրական ազդեցություն: Այն կնպաստի. 59
10.11 Լանդշաֆտ, բարեկարգում.կանաչապատում. 59
11. Շրջակա միջավայրին, այդ թվում՝ բնակչության առողջությանը վերաբերող միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված նպատակները, որոնք վերաբերում են հիմնադրութային փաստաթղթին և այն ուղիները, նկատառումները, որոնք հաշվի են առնվել հիմնադրութային փաստաթուղթը մշակելիս..... 61
12. Հիմնադրութային փաստաթղթի գործողության ընթացքում ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետնախագծային վերլուծության ծրագիրը. 68
13. Հետնախագծային վերլուծություն. 69
14. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան. 70
15. Մոնիթորիգի (մշտադիտարկում) պլան 82
16.Գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, տեխնիկական թերությունների, դժվարությունների՝ ներառյալ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները. 84
17. Տեղեկատվություն հանրության ծանուցման, քննարկումների արդյունքների, գրավոր կամ բանավոր 84
ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, կարծիքների, դրանց ընդունման կամ չընդունման հիմնավորումների վերաբերյալ: 84

1.Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Արմավիրի մարզի Արմավիր համայնքի, Մայիսյան բնակավայրում գյուղատնտեսական արտադրությունների հիմնում ներդրումային ծրագրային փաստաթղթի ՌԷԳ հաշվետվություն:
Նախաձեռնող	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ
Նախաձեռնողի իրավաբանական հասցեն	Տավուշի մարզ, Իջևան 4001 Ազատամարտիկների փողոց/Շ/ 4
Նախաձեռնողի փաստացի գործունեության հասցեն՝	Մայիսյան բնակավայրի Այգեգործական 4-րդ թաղամաս, 12-րդ փողոց 2 և 6 հասցեներ
Նախաձեռնողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ավետիսյան Արգամ, ijevanyanbecon <ijevanyanbeconarmen@gmail.com> հեռ. 095069135
Գնահատման հաշվետվության կազմող	«Նովալ»ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 noval.llc.noval@gmail.com

2. Հիմնադրութային փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը և առնչվող այլ իրավական ակտերը

2.1 Հայաստանի Հանրապետության հիմնադրութային փաստաթղթին առնչվող միջազգային օրենսդրություն

N	Համաձայնագիր, կամ արձանագրություն, անունը և վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություններ
1	Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայ" կոնվենցիա (Ռամսար, 1971թ.)	1975	1993	Ratified by USSR	
2	Կենսաբանական բազմազանության մասին" կոնվենցիա (Ռիո-դե-Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	1993թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից

N	Համաձայնագիր, կամ արձանագրություն, անունը և վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություններ
3	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն / Կարթագենա, 2000		2000	2004	
4	ՄԱԿ-ի "Կլիմայի փոփոխության մասին" շրջանակային կոնվենցիա (Նյու-Յորք, 1992թ.)	1994	1992	1993	1993թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)			2002	2003 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
6	"Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին" կոնվենցիա (Գենևա, 1979թ.)	1983		1996	1997 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
7	"Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին" կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	1997		1996	1997 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
	Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրություն (Կիև, 2003թ.)		2003		
8	"Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին" կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.)	2000		1996	1997 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
	"Անդրսահմանային ջրերի վրա արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության արդյունքում պատճառած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության և փոխհատուցման մասին" արձանագրություն (Կիև, 2003թ.)		2003		
9	ՄԱԿ-ի "Անապատացման դեմ պայքարի" կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	1997 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
10	"Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին" կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	1999 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
11	"Օզոնային շերտի պահպանության մասին" կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	1999 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից

N	Համաձայնագիր, կամ արձանագրություն, անունը և վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություններ
	"Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին" արձանագրություն (Մոնրեալ, 1987թ.)	1989		1999	1999 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
12	"Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության և արդարադատության մատչելիության մասին" կոնվենցիա (Օրհուս, 1998թ.)	2001	1998	2001	
13	"Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին" կոնվենցիա (Ռոտերդամ, 1998թ.)		1998	2003	
14	"Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին" կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.)	1996	1999		
	"Ջրի և առողջության մասին" արձանագրություն (Լոնդոն, 1999թ.)		1999		
15	"Կայուն օրգանական աղտոտիչների մասին" կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001թ.)		2001	2003	
16	"Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումը արգելելու մասին" կոնվենցիա (Գենևա, 1976թ.)	1978		2001	2002 թ.-ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
17	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա 2000)			2004	
18	Մշակութային եվ բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության կոնվենցիա (Փարիզ 1972)			1993	
19	Էներգետիկ խարտիայի պայմանագիր (Լիսբոն 1994)			1997	
	Էներգետիկ խարտիային կից՝ էներգետիկ արդյունաբերության հարցերի և էկոլոգիական հարակից ասպեկտների արձանագրություն (Լիսբոն 1994)			1997	

N	Համաձայնագիր, կամ արձանագրություն, անունը և վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություններ
20	Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին»կոնվենցիա (Բեռն 1979թ.)	1982	2006		
21	ՄԱԿ-ԻԵՏՀ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության , որոշումները ընդունելու գործընթացին հասարակայնության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա:				

2.2 Հայաստանի Հանրապետության ոլորտը կարգավորող իրավական ակտերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

«Անասնաբուժության մասին» ՀՀ օրենք Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժության ոլորտի իրականացմանը, կառավարմանն առնչվող հարաբերությունները:

«Սննդի անվտանգության մասին» ՀՀ օրենք (Ընդունված է 2006 թվականի նոյեմբերի 27-ին) Սույն օրենքը կարգավորում է սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահման, իրացման, ինչպես նաև առևտրի և հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգության հետ առնչվող հարաբերությունները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121-Ն ((ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ. ՀՕ-522-Ն)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա

միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)- սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)–Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի

ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)-Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և

տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

ՀՀ կառավարության որոշումներ.

- **ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ.** «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն» N 2343 - Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 21դեկտեմբերի 2023թ.** «ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ Է ԿՈ ԼՈ ԳԻ ԱԿԱՆ ԳՆԱՀԱՏ ՄԱՆ ԿԱՐԳԻ Ե Վ ՌԱՋՄԱՎ ԱՐԱԿԱՆ Է ԿՈ ԼՈ ԳԻ ԱԿԱՆ ԳՆԱՀԱՏ ՄԱՆ ՀԱՇՎ Ե Տ Վ Ո Ի Թ ՅԱՆԸ ՆԵ ՐԿԱՅԱՑՎ Ո Ղ ՊԱՀԱՆՋՆԵ ՐԸ ՀԱՍ Տ ԱՏ Ե ԼՈ Ի ՄԱՍ Ի Ն» **N 2294-Ն որոշում:**
- **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ**. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ.** ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ**. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ.** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:

3. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրութային փաստաթղթի ՌԷԳ գործընթացին կարգավորման հիմքերը.

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 21դեկտեմբերի 2023թ. «ՌԱԶՄԱՎ ԱՐԱԿԱՆ Է ԿՈ ԼՈ ԳԻ ԱԿԱՆ ԳՆԱՀԱՏ ՄԱՆ ԿԱՐԳԻ Ե Վ ՌԱԶՄԱՎ ԱՐԱԿԱՆ Է ԿՈ ԼՈ ԳԻ ԱԿԱՆ ԳՆԱՀԱՏ ՄԱՆ ՀԱՇՎ Ե Տ Վ Ո Ի Թ ՅԱՆԸ ՆԵ ՐԿԱՅԱՑՎ Ո Ղ ՊԱՀԱՆՋՆԵ ՐԸ ՀԱՍ Տ ԱՏ Ե ԼՈ Ի ՄԱՍ Ի Ն» N 2294-Ն որոշման համաձայն:

ՌԷԳ-ի ենթակա են սոցիալ-տնտեսական զարգացման, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, տարածքային զարգացման, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, ռեկրեացիայի, անտառատնտեսության, ձկնաբուծության, թափոնների գործածության, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրույթային փաստաթղթերի նախագծերը, որոնք սույն օրենքի 12-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեությունների տեսակների կամ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված նախագծերի իրականացման հիմքեր են պարունակում: Հիմնադրույթային փաստաթղթի՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության չափանիշները սահմանվում են ՌԷԳ կարգով: Հիմնադրույթային փաստաթղթի նախագծի ՌԷԳ-ը և փորձաքննությունն իրականացվում են մինչև հիմնադրույթային փաստաթղթի ընդունումը: Սույն Ներդրումային ծրագիրը Գյուղատնտեսության ոլորտի է և համաձայն Օրենքի Գյուղատնտեսության ոլորտը ներառված է ՌԷԳ-ի ենթակա գործունեությունների ցանկում:

2. ՌԷԳ-ի իրականացման փուլերն են՝

1) ՌԷԳ շրջանակի որոշումը.

2) ՌԷԳ հաշվետվության կազմումը.

3) ՌԷԳ արդյունքների հաշվի առնելը հիմնադրույթային փաստաթղթում:

3. Նախաձեռնողը՝

1) սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փուլերում խորհրդատվության համար դիմում է լիազոր մարմին, առողջապահության բնագավառի կառավարման լիազոր մարմին, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով հիմնադրույթային փաստաթղթի բնագավառը, դիմում է նաև սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված բնագավառների կառավարման լիազոր պետական մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմիններ. Սույն Ներդրումային ծրագիրը Գյուղատնտեսության ոլորտի է և համաձայն Շրջակա միջավայրի նախարարության N5/042/3866 Գրության, այն ենթակա է ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության:

Գնահատման հաշվետվության բովանդակությունը կազմվել է Համաձայն ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և Ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը

ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման պահանջների համաձայն։

Հիմնադրութային փաստաթղթի՝ ՌԷԳ հաշվետվությունը պետք է ներառի՝

1) հիմնադրութային փաստաթղթի համառոտ նկարագիրը, նպատակը, իրականացման ժամկետը, առկայության դեպքում նաև կապը կամ համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված այլ առնչվող հիմնադրութային փաստաթղթերի հետ.

2) ՌԷԳ հաշվետվության ամփոփ բովանդակությունը, որը ներառում է տեղեկատվություն նախաձեռնողի մասին, հիմնադրութային փաստաթղթի ամփոփ նկարագիրը, հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության արդյունքում հնարավոր ազդեցությունների և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումների հանրամատչելի, համառոտ նկարագիրը.

3) հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր զգալի վնասակար ազդեցությունները կանխելու, նվազեցնելու կամ մեղմացնելու համար միջոցառումները.

4) հիմնադրութային փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կամ ստորագրված միջազգային պայմանագրերը և առնչվող այլ իրավական ակտերը.

5) հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնակչության առողջության ներկա վիճակը, սոցիալական գործոնները և խնդիրները.

6) շրջակա միջավայրին, այդ թվում՝ բնակչության առողջությանը վերաբերող միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված նպատակները, որոնք վերաբերում են հիմնադրութային փաստաթղթին և այն ուղիները, նկատառումները, որոնք հաշվի են առնվել հիմնադրութային փաստաթուղթը մշակելիս.

7) հիմնադրութային փաստաթղթի նախագծի դրույթների գործողության իրականացման և չիրականացման դեպքերում շրջակա միջավայրի՝ ներառյալ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, այդ թվում՝ անդրսահմանային.

8) հիմնադրութային փաստաթղթի մոտեցումների բոլոր հնարավոր այլընտրանքային տարբերակների (այդ թվում՝ զրոյական) համեմատությունը և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորումը.

9) հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց արդյունավետությունը.

10) հիմնադրութային փաստաթղթի գործողության ընթացքում ազդեցության մշտադիտարկման և հետնախագծային վերլուծության ծրագիրը.

11) սույն հավելվածի 2-րդ կետում նշված գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, տեխնիկական թերությունների, դժվարությունների՝ ներառյալ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

12) հաշվետվությունում ներառված տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները.
13) տեղեկատվություն հանրության ծանուցման, քննարկումների արդյունքների, գրավոր կամ բանավոր ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, կարծիքների, դրանց ընդունման կամ չընդունման հիմնավորումների վերաբերյալ:

4. Հիմնադրութային փաստաթղթի համառոտ նկարագիրը, նպատակը, իրականացման ժամկետը, կապը և (կամ) համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված այլ առնչվող հիմնադրութային փաստաթղթերի հետ.

Նկարագիրը-Սույն ներդրումային ծրագիրը միտված է Արմավիրի մարզի Մայիսյան համայնքում գյուղատնտեսական արտադրությունների հիմնմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի համայնքի զարգացմանը: Սույն ներդրումային ծրագիրը նախատեսվում է իրականացնել մոտ 3 տարի կամ 35 ամիս ժամկետում:

Առնչվող հիմնադրութային փաստաթղթեր: Որպես տարածքի համար հաստատված հիմնադրութային փաստաթուղթ դիտարկվել է «ԱՐՄԱՎԻՐ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը: «ԱՐՄԱՎԻՐ-3»-ի մեջ ներառված է Մայիսյան բնակավայրը, որի տարածքում նախատեսվում է իրականացնել սույն ներդրումային ծրագիրը: Ամբողջ «Արմավիր-3» տարածքը գտնվում է կիսաանապատային լանդշաֆտային գոտում, խիստ մայրցամաքային կլիմայով, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով:

Համաձայն նշված փաստաթղթի գյուղատնտեսության հանդեպ ակտիվ քաղաքականության համատեքստում ակտիվորեն քարոզվում է հատկապես հողերի օգտագործման խոշորացման ու կոոպերացիայի զարգացման գործընթացը, մշակվել են գործընթացի իրագործման օրենսդրական ու նորմատիվային հիմքերը: Գործընթացի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ այն միայն տնտեսական հիմքերով չի պայմանավորված: Գյուղացիությունը բավականին բարդ, շարժունակ, ներքին բազմազանություն ունեցող համակարգ է, հետևաբար արմատական փոփոխությունների հաջողությունը հնարավոր է ապահովել միայն համալիր, այդ թվում՝ սոցիալ-մշակութային գործոնների հաշվառմամբ: Հողերի օգտագործման խոշորացումն ու կոոպերացիայի զարգացումը կարող է դառնալ կարևոր քայլ ճգնաժամի հաղթահարման ու գյուղատնտեսության զարգացման ճանապարհին:

Պետությունը ըստ էության, հայտարարել է գյուղատնտեսական քաղաքականության նոր գերակայությունների մասին՝ հողերի օգտագործման խոշորացման ու գյուղատնտեսական կոոպերացիայի խթանում, գյուղատնտեսական գործունեության արդյունավետության աճ, մթերումների հիմնախնդիրների լուծում, գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով սերմացուի,

պարարտանյութերի, վառելիքի մատակարարում և այլն:

Համայնքների սոցիալ-մշակութային զարգացման համատեքստում այս քաղաքականությունը պետք է հանգեցնի գյուղական բնակչության կենսամակարդակի աճին, գյուղի՝ որպես բնակության վայրի գրավչության բարձրացմանը, պահանջմունքների բավարարման հնարավորությունների բազմազանեցմանը՝ ենթակառուցվածքների զարգացման ճանապարհով, արտագաղթի ու արտագնացության միտումների աստիճանական հաղթահարմանը և այլն:

Հողի մասնավորեցմանը հաջորդող ժամանակաշրջանում ձևավորված գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն ու մասնատված հողաբաժինները սահմանափակում են գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացումը և լուրջ խոչընդոտ են հանդիսանում ոլորտի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման, մրցունակության բարձրացման տեսանկյունից, առանձնահատուկ կարևորվում է գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեությունը, մասնավորապես կոոպերատիվների, ընկերությունների և կամավորության սկզբունքի վրա հիմնված կազմակերպական այլ միավորումների ձևավորման միջոցով: Գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության բարձրացման, ընդլայնված վերարտադրության ապահովման, ապրանքայնության մակարդակի բարձրացման, ոլորտի ինտենսիվացման առումով, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեությունն օրինաչափ գործընթաց է, որը չունի այլընտրանք և բնորոշ է, մասնավորապես, անցումային տնտեսության բոլոր երկրներին:

ՀՀ-ում սահմանվում է գյուղատնտեսության զարգացման հետևյալ տեսլականը՝ գյուղատնտեսության զարգացման ու խթանման քաղաքականության երկու մոտեցում՝ գյուղացիական տնտեսությունների խոշորացում, կոոպերացիայի տարբեր ձևերի խրախուսում և գործող փոքր չափերի գյուղացիական տնտեսություններին պետական աջակցության արդյունավետ մեխանիզմների ներդրում: «ԱՐՄԱՎԻՐ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումներում ընդգրկվող տարաբնակեցման համակարգի առկա վիճակի և հեռանկարային տարածական զարգացման ուղղությունները որոշելու համար կարևոր նշանակություն ունեն ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի դրույթները, ՀՀ 2016-2025 թվականների տարածքային զարգացմասն ռազմավարությունը, ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը, ՀՀ Արմավիրի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, տարածքի բնական պայմանների և համակարգում ներառած համայնքների /բնակավայրերի/ յուրահատկությունները: Տարածական պլանավորման ոլորտի զարգացման և առաջընթացի համար կարևոր նշանակություն ունեն շրջակա միջավայրի պահպանությանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների կիրառումը, ինչպես նաև տարածքների երկրաբանական և սեյսմիկ պայմանների մասին եզրակացությունները, քաղպաշտպանության ինժեներատեխնիկական եվ արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ:

Գյուղատնտեսական արտադրանքի ներդրմանը ուղղված ներդրումային ծրագրի

իրականացումը համահունչ է «ԱՐՄԱՎԻՐ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթի դրույթներին և հեռանկարային լուծումներին:

Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2021-2026թթ. զարգացման ծրագիր, որի նպատակները համահունչ են սույն ներդրումային ծրագրի նպատակներին և խնդիրներին:

- Արմավիրի տարածքային համաչափ և կայուն զարգացում:
- Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում:

5. Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեության բնութագրերը

5.1 Ֆիզիկական բնութագրերը:

Սույն ներդրումային ծրագրում ներառված է

-խոզաբուծական համալիրի կառուցում, որի մեջ ներառված է խոզաբուծարանի սարքավորումների գնում,

- համակցված կերի գործարանի կառուցում, որի մեջ ներառված է սարքավորումների գնում և տեղադրում, համակցված կերի գործարանի սիլոսներ /տեղակայմամբ/:

- Խոզաբուծական համալիրի թափոնների հեռացման համակարգ, որի մեջ ներառված է գոմաղբի պահեստարան, գոմաղբի հեռացման համակարգ՝սեպարատորով, կենսաթափոնների ուտիլացման վառարան, կոմպոստի հոր:

5.2 Ռեսուրսային պահանջները:

Նախատեսվում է խոզերի ծնողական հոտի ձեռքբերում, որի մեջ ներառված է մերուների ձեռք բերում (650գլուխ), մաքրացեղ մերուներ (50գլուխ),տերմինալ վարազներ (6գլուխ),լանդրաս վարազներ(2 գլուխ): Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև տրանսպորտային միջոցների ձեռք բերում:

Նախատեսվում է հումքի ձեռքբերում, այդ թվում գարի, եգիպտացորեն, ցորեն, յուղ, կավիճ,արևածաղկի քուսպ, սոյայի քուսպ, պրեմիքսներ:

Նախատեսվում են հետևյալ տեսակների կերի օգտագործում

- CK-1 սուպորոս,
- CK-2 լակտացիա,
- CK-5 ստարտ
- CK-6 գրովեր
- CK-7 ֆինիշ

Վարազների կեր:

Հողային ռեսուրսներ-Անմիջապես խոզաբուծական տնտեսության տակ նախատեսվող և հարակից տարածքներում տեղամասում հողաբուսական շերտը բացակայում է: Ըստ կատարված ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ տեղամասի գրունտները ներկայացված են սպիտակ, դեղնավուն փոշային կավավազներով (սպիտակահողեր), խճի, մանրախճի հետ, տեղ-տեղ առկա են մեծաքարեր: Բերրի շերտը բացակայում է:

Տարածքում առկա են խորհրդային տարիների գոմերի կիսաքանդ շենքեր: Նախատեսվում է ամբողջությամբ վերականգնել տարածքը՝ վերականգնել շինությունները, ստեղծել կանաչ գոտի:

Ծրագրի իրականացման համար օգտագործվելու են հողային ռեսուրսներ, սեփականության իրավունքով ձեռք բերված՝ Մայիսյան համայնքի Այգեգործական 4-րդ թաղամասի, 12-րդ փողոցի 6,2 հասցեներում տեղակայված հողամասերը: Ներդրումային ծրագրի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է ձեռք բերել նաև նշված հողամասերի հարակից՝ կադաստրային ծածկագրով հետևյալ հողամասերը՝ ընդհանուր 18,27834 հա տարածքով:

- 04-043-0964-0001- կադաստրային ծածկագրով հողամասի վրա նախատեսվում է կառուցել խոզերի բտման երեք մասնաշենք:
- 04-043-1004-0001 կադաստրային ծածկագրով հողամասի վրա նախատեսվում է կառուցել գոմաղբի կուտակման հորեր:
- 04-043-1003-0009 կադաստրային ծածկագրով հողամասը նախատեսվում է օգտագործել վերամշակված գոմաղբով հողի բարելավման, իսկ հետագայում գյուղատնտեսական նպատակներով:

Ջրային ռեսուրսներ- Անասնատնտեսության անխափան ջրամատակարարումն ապահովելու համար Ընկերությունը նախատեսում է օգտագործել տեղանքի գրուտային ջրերը, գրունտային ջրի տեսակարար ծախսը սպասվում է 2-2.7 լ/վրկ:

Անասնատնտեսության տարածքում նախատեսված է կանաչ գոտի, 0.31 հա մակերեսով՝ հիմնականում պտղատու ծառեր: Ոռոգման կարիքների համար օգտագործվելու է ինքնավար մաքրման կայանի պարզվածք՝ 13299մ^3/տարի: Ծրագրի իրականացման համար համաձայն հաշվարկների անհրաժեշտ է 49 աշխատող:

5.3 Օգտագործվող նյութերի բնութագրերը:

Օգտագործվող հիմնական նյութերն են անասնաբուժական պատրաստուկներ, որի մեջ ներառված են հորմոնալ պատրաստուկները, վիտամինները, հակահելիմինտային ախտահանիչ պատրաստուկները, հակաբիոտիկները, լրացուցիչ բուժիչ նյութերը, վառելիքաքսուկային նյութեր և գործիքները:

5.4 Տեխնոլոգիական գործընթացների բնութագրերը.

Սույն ներդրումային ծրագրի իրականացման և ամբողջական հզորությանը անցնելու դեպքում տարեկան կստանան 2280 տոննա կենդանի քաշով խոզի միս: Համակցված կերերի արտադրամասը հնարավորություն կնձեռնի ապահովելու կենդանիների կերակրումը: Արդի տեխնոլոգիաներով տարածքում նախատեսվող խոզաբուծական համալիրի թափոնների հեռացման համակարգը ներդրվում է թափոնների անվտանգ ոչնչացման նպատակով, ներառված է.

- գոմաղբի պահեստարան,
- գոմաղբի հեռացման համակարգ՝սեպարատորով,
- կենսաթափոնների ուտիլացման վառարան,
- կոմպոստի հոր:

6. Հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագիրը և դրանց հնարավոր փոփոխությունը՝ առանց հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման.

6.1.Հնարավոր ազդեցության ենթակա տարածք.

հիմադրութային փաստաթղթով նախատեսված տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան բնակավայրի վարչական տարածքում, որը ներառված է «Արմավիր 3» միկրոռեգիոնալ մակարդակի տարածական զարգացման պլանավորման փաստաթղթում: Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Սելավ-Մաստարա գետի միջին հոսանքի հյուսիսային ձախափնյա մասում: Ռելիեֆը հարթ է, ընդհանուր թեքությամբ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք:



«ԳԵՈԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ-ի կողմից տարածքում իրականացվել են ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ, համաձայն որի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ ինժեներաերկրաբանական էլեմենտներով՝ (վերևից-ներքև).

Շերտ - 1 Կավավազային գրունտ, բաց սպիտակ,բաց դեղնավուն երանգով, խճի և մանրախճի հետ, սակավ խոնավ: Շերտն չունի համատարած տարածում, բացված

հզորությունը հասնում մինչև է 6,0 մետր: Ժամանակակից դելյուվիալ պրոլյուվիալ առաջացումներ են:

Շերտ –2 Խճա-մանրախճային գրունտ, կավավազային լցոնով :
Շերտ - 3 Բազալտներ՝ մոխրագույն, թույլ ծակոտկեն, տեղ-տեղ խոռոչավոր, ծակոտկեն, բեկորային անջատումներով, կարծր: Բազալտների մակերևույթը (հնեառելիեֆը) անհարթ է: Բազալտի հերթափոխվող առանձին շերտերի հզորությունը մինչև 3,5 մետր է: Շերտը համատարած չէ: Չորրորդական ժամանակաշրջանի հրաբխային առաջացումներ:
Շերտ - 4 Հրաբխային խարամ, ավազային, ավազախճային կազմի, շլակավորված բազալտի խճի և մանրախճի հետ: Հրաբխային խարամի հերթափոխվող առանձին շերտերի հզորությունը տատանվում է 1,7-ից մինչև 5,0 մետր: Շերտը համատարած չէ: Չորրորդական ժամանակաշրջանի առաջացումներ:
Սեյսմիկա. Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի, ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,3g:
Հիդրոերկրաբանական պայմանները. Գրունտային ջրերը գտնվում են մեծ խորությունների վրա, դա պայմանավորված է բազալտների բարձր ճեղքավորվածությամբ և հրաբխային խարամի բարձր ֆիլտրացիայի առկայությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Տեղամասում փաստացի մինչև 6,0 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Շինարարական տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարության համար:
Տեկտոնիկա. Տեկտոնական տեսակետից շրջանը մտնում է Արաքսյան օռոտեկտոնական գոտու Մերձարաքսյան ինտրագեոանտիկլինալ զոնայի մեջ: Ռեգիոնի հարավային մասում՝ Արաքս գետի հովտին զուգահեռ ձգվում է խոշոր խորքային Արաքսյան խզվածքը: Նվազագույն հեռավորությունը նախագծման տարածքից մինչև խզվածքի գոտին կազմում է 8 կմ՝ դեպի հարավ:
Տարածքի սողանքային քարտեզը ներկայացվել է համաձայն՝ ՀՀ սողանքային աղետի կառավարման ծրագրի (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն, 2017թ.):
Համաձայն քարտեզի՝ տարածքում սողանքային երևույթները բացակայում են:

Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ բնակավայրի տարածքում բացակայում են:

Կլիման.շրջանի կլիման խիստ ցամաքային է՝ ամառը շոգ է, տևական (4-5 ամիս) ու չոր, բարենպաստ լեռնահովտային քամիներով, ձմեռը ցուրտ է, անհողմ ու կարճատև:: Նախատեսվող խոզաբուծարանի տարածքը գտնվում է տաք կլիմայական շրջանում՝ բացարձակ նիշերը տատանվում 860,6-862,9 մ-ի սահմաններում:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.8°C: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 60%: Տեղումների միջին տարեկան քանակը չի գերազանցում 260 մմ, տարվա ընթացում վառ արտահայտված է 2 մաքսիմում՝ գարնանը և աշնանը: Հաստատուն ձյան ծածկույթն առաջանում է ոչ ամեն տարի, ձնածածկույթով օրերի թիվը կազմում է ոչ ավելի քան 38 օր:

6.2. Շրջակա միջավայր.

6. 2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան հատվածում: Այն Հայաստանի ամենաբարձր բնակեցված մարզն է, բայց տարածքով՝ ամենափոքրը: Մարզը զբաղեցնում է 1231 կմ² տարածք, ՀՀ տարածքի 4.1 %-ը, իր մեջ ընդգրկում է Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածաշրջանները: Մարզկենտրոնը Արամավիր քաղաքն է:

Նկար 3

Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ և Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին: Մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը հանրապետությունը միացնում է Թուրքիային:

Այն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիս-արևմտյան մասը (800-1000մ բացարձակ բարձրությունները)՝ հյուսիս – արևմուտքից հարավ-արևելք ընդհանուր թեքությամբ: Ընդգրկում է Արարատյան գոգավորության հյուսիս-արևմտյան, Արաքսի ձախափնյա մասերը և Արագած լեռնազանգվածի հարավ-արևմտյան նախալեռնային ստորոտները: Մարզի ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է:

Լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային, ստորին-վերին չորրորդական բազալտները,

տուֆերը և տուֆաբրեկչիաները, լճա-ալուվիալ նստվածքները, որոնք ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով, հիմնականում կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ: Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում ռելիեֆը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում 860,6-862,9 մ սահմաններում:

6.2.2Սեյսմիկա և երկրաբանություն.

ՀՀ Արմավիրի մարզի գրեթե ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից գտնվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում: Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի, ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,3g:



6.2.3 Կլիմա և օդային ավազան

Արմավիրի մարզը գտնվում է ծովի մակարդակից 800-1000մ բարձրությունների վրա :

Մարզը գտնվում է տաք կլիմայական գոտում: Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 254մմ: Ամառը շոգ է, բացարձակ առավելագույնը ջերմաստիճանը ամռանը կազմում է 41.5°C: Ձմեռը ցուրտ է նացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -31.4°C: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 60%: Քամու միջին ամսական արագությունը հունվարին կազմում է 0,5մ/վ, հունվարին՝ 1,1 մ/վ, միջին տարեկան արագությունը՝ 0,9մ/վ: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 70 սմ:

Գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի հանրապետության շինարարական նորմեր: Համաձայն նշված փաստաթղթի Արմավիր քաղաքում կլիմայական բնութագրերն են.

Օդի ջերմաստիճանը, ^{0}C

Աղյուսակ 1.

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ, ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 **Օդի միջին ջերմաստիճան**

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, ˚C												Միջին տարեկան, ˚C	Բացարձակ նվազագույն, ˚C	Բացարձակ առավելագույն, ˚C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արմավիր	-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0.8	11.8	-31.4	41.5

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 **Օդի հարաբերական խոնավությունը**

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
6. Արմավիր		75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76	60	75	60	46	30

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3.

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 **Մթնոլորտային տեղումները**

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$ մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
6. Արմավիր	18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254	96	158
	19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47		

Քամի

Աղյուսակ 4

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Անիմներ	Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների								Անդորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7. Արմավիր	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	Արլ	1.9	ՀսԱրմ	2.8
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8						
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1.3				
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7						
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1.1				
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6						
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14	72	0.6				
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8						

Աղյուսակ 5

Արևափայլի տևողությունը

ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 **Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)**

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
12. Արմավիր	ժ	71	111	162	177	236	310	328	314	269	186	139	67	2370
	օր	16	10	7	5	1	0.5	1	0.1	1	5	7	17	71



Օդային ավազան. Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները: Մարզում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝ ՀԱԷԿ-ը, Զվարթնոց օդանավակայանը, հանքավայրերի շահագործումը, տարեցտարի ավելացող ավտոտրանսպորտը և աղքատությամբ պայմանավորված ամեն տեսակի կոշտ վառելիքի այրումը: Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ համապատասխան դիտացանցերի

միջոցով: Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայաններում:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի **«Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի** բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Մայիսյան բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO2)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO2)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³

6.2.4. Հողային ռեսուրսներ

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր:

Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը: Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

ՀՀ Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում՝ առաջացնելով հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ, վանադիում և այլն) և ցիանական միացություններով: Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ մետաղաձուլական գործարանները, արդյունաբերական և կենցաղային թափոնները, ժամանակակից գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու առողջության վրա բացասաբար են ազդում նաև պարարտանյութերի բոլոր խմբերը, մասնավորապես քլոր պարունակող և ֆոսֆորական պարարտանյութերը: Ծանր մետաղների կուտակումը հողում կատարվում է ավելի արագ տեմպերով, քան հեռացումն ու չեզոքացումը, որը տևում է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն (Հավելված 3):

2022 թվականի հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են իրականացվել են նաև Արմավիրի մարզում: Հողերի աղտոտվածության ցուցանիշները համաձայն՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ, տարեկան ամփոփ տեղեկագրի:

Աղյուսակ 6

Մարզ/ Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
	Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ						
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. տեղեկագրերում արմավիր համայնքի մասին տեղեկատվությունը բացակայում է:

6.2.5 Ջրային ռեսուրսներ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Արմավիր քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այղր (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50 հեկտար մակերես, ունի 2 մետր խորություն, ձագարաձև ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը), որը սկիզբ է առնում Այղր լճից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների

պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Գործում են Ստորին Հրազդանի, էջմիածնի, Մեծամորի և այլ ջրանցքներ: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերի սնուցումն իրականացվում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր, որոնք սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերն առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, սննդի արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ դիտացանցերի միջոցով:

Մակերևութային ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտացանց
Գետավազան
Արարատ
Արագածոտն
Արփա
Վայոց ձոր
Գեղարքունիք
Լոռի
Կոտայք
Սևան
Սյունիք
Վեդի
Քասախ
Բուն գետի վտակներ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԵՆՈՒՄՆԵՐ
ԵՐԵՎԱՆ
Մարզկենտրոններ
Քաղաքներ
Մակերևութային ջուր
Որակի մոնիթորինգի դիտակետեր
Հիդրոլոգիական դիտակետեր
Սևանա լճի որակի մոնիթորինգի դիտակետեր
Լճեր և ջրամբարներ
Մարզեր
Գետային ցանց
ՀՀ պետական սահման
Սևան
Արփա
Արաքսի ջրամբար
Գեղամի լիճ
Ուրցի ջրամբար
Գեղարքունիքի ջրամբար
Ապարանի ջրամբար
Ագարակի ջրամբար
Ամասիայի ջրամբար
Ալավերդի
Դիլիջան
Ստեփանավան
Վանաձոր
Գյումրի
Մարտունի
Գավառ
Սևան
Ծաղկաձոր
Աբովյան
Հրազդան
Եղվարդ
Աշտարակ
Ապարան
Թալին
Գորիս
Սիսիան
Ջերմուկ
Վարդենիս
Դարբնիս
Մարտակերտ
Մարտունի
Գավառ
Ասկերան
Հադրութ
Շուշի
Քաշաթաղ
Մեղրի
Կապան
Սիսիան
Դարբնիս
Գորիս
Ջերմուկ
Վարդեն

կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն:

Մեծամոր գետի աղտոտվածության հիմնական աղբյուր են հանդիսանում գետ թափվող համայնքների տնտեսակենցաղային, ինչպես նաև վերջին տարիներին Մեծամոր գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում առաջացող հոսքաջրերը:

Ըստ 2024թ. 4-րդ եռամսյակի տեղեկագրի՝Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և հարավ-արևելք հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեծամոր	Մեծամոր	2.02	18.5	11	2.16	20.9	10	3.37	24.7	14

2024 թվականի 4-րդ եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 3 որոշված դիտակետերում: ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, քրոմի, մանգանի, նիկելի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿները: 2024 թվականի 4-րդ եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 6 դիտակետում: Որոշված ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, մագնեզիումի, պղնձի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները:

6.2.6. Կենսաբազմազություն

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:



Բուսական աշխարհ. մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (Alisma lanceolatum), սովորական նետախոտը (Sagittaria sagittifolia L.), եռատերև նետախոտը (Sagittaria trifolia L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (Actinolema macrolema), աննշմարակող անհարթապտուղը (Aphanopleura trachisperma), երնջակ Վանատուրի (Eringium vanaturii), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (Amberboa moschata), խոզանափուշ բարակը (Caucinia tenella), կանգար տուրնեֆորի (Gundelia tournefortii), կաթնուկ Թախտաջյանի (Lactuca takhtadzhianii), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (Isatis ornitorhynchus), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (Sambucus tigranii), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (Acanthophyllum pungens), ալոխրուլա բունգեի (Allochrusa bungei), մեխակ Լիբանանի (Dianthus libanotis), թելուկազգիներից՝

բիեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera), օշան Թամամջյանի (Salsola tamamschjanae), սպանախ քառաեզ (Spinacia tetrandra), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (Astragalus paradoxus), հացիամեմ գլխիկավոր (Trigonella capitata), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (Frankenia pulverulenta), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (Nitraria schoberi), հացազգիներից՝ այծակն հաստ (Aegilops crassa), ցորեն արարատյան (Tritiucum araraicum), կարմրանազգիներից՝ կարմրան (Tamarix), կարմրան ութառեզանի (Tamarix octandra), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (Tetradiclis tanella) և այլն:

Արմավիրի մարզում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված են 26 տեսակներ:

Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են աղուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝ խնկեղեգ ճահճային(Acorus calamus L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային(Sternbergia colchiciflora Waldst. et Kit), Ակտինոլեմ խոշաբաժակ (Actinolema macrolema Boiss), Երնջակ Վանատուրի (Eryngium wanaturii Woronow), Վարդատերեփուկ Իլյինի (Amberboa iljiniana Grossh) և այլն:

Նկար 11. Շտերնբերգիա շնդեղածաղկային Նկար 12. Ակտինոլեմ խոշաբաժակ

Համաձայն «Արմավիր-3» տարածական զարգացման միկրոռեգիոնալ փաստաթղթի՝ պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակներն են.

Աղյուսակ

Հ/h	Բուսատեսակների անվանումը		Պահպանության կարգավիճակ
	Լատիներեն	Հայերեն	
1	Acorus calamus L.	Խնկեղեգ ճահճային	1
2	Allium akaka Gmel	Սոխ ակակա	2
3	Amberboa moschata (h)	Վարդատերեփուկ մուշկային	3
4	Bienertia cicloptera Bunge	Բիեներցիա շուրջաթև	1
5	Cicer anatolicum Alef	Սիսեռ անատոլիական	1
6	Connvolvulus commutatus Boiss	Պատատուկ փոփոխական	2

7	Diospyros lotus	Խուրմա կովկասյան	1
8	Ferula persica Willd	Նարդես պարսկական	2
9	Hedysarum micripterum Bonge	Կուրկուրան մանրաթև	2
10	Inula aucherana DC	Կղմուխ Օշեի	1
11	Lactuca Takhtadzani Sosn	Կաթնուկ Թախտաջյանի	2
12	Linum seljukorum Davis	Կտավատ սելջուկյան	1
13	Merendera sobolifera Fischet C.A. Mey	Խլոպուզ ընդյուղակիր	1
14	Orchis laxiflora Lam	Խոլորձ նոսրածաղիկ	1
15	Astragalus paradoxus	Գազ տարօրինակ	2

Կենդանական աշխարհ. կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խխունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Vulpes vulpes L. (աղվե ս), Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L.(կաքավ), Grus grus L. (կռունկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճռիկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և ղրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (Porphirophora hamelii) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (Larus armeniacus But.), Մեղու Դեսպտորիա(Megachile deseptoria Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (Rhinolophuseuryales), վարդագույն հավալուսն(Pelecanus onocrotalus), քաջահավ (Plagadis falcinellus Linneaus), փոքր ձկնկուլ(Phalocrocorax pygmaeug Linneaus), Ուբադչի ճպուռ (Gomphus ubadschii Schmidt), Սատունինի սկոտոդրիմադուզա(Scotodrymadusa satunini), Հայկական բնդեռնիկ (Glaphyrus calvaster Zaitzev), Սև անգղ(Aegipus monachus), Տափաստանային մկնաճուռակ(Circus macrourus), Տափաստանային մկնաճուռակ (Glareola nordmanni),

Սատունինի սկոտոդրմադուզա(Scotodrymadusa satunini), Արարատյան որդան (Porphirophora hamelii)և այլն:

Համաձայն «Արմավիր-3» տարածական զարգացման միկրոռեգիոնալ փաստաթղթի՝

Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

Աղյուսակ 1

Ð/Ñ	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր գրքի անվանում		
	Լատիներեն	Հայերեն	ՀՀ	ԽՍՀՄ	ԲՊՄՍ
1	Erinaceus auritas Gmelin	Լայնականջ ոզնի	1	-	-
2	Rhinolophus euryales	Հարավային պայտաքիթ	1	1	-
3	Rhinolophus Mehelyi	Մեհելիի պայտաքիթ	2	-	-
4	Myotis nattereri Kuhl.	Նատերերի արաքսյան գիշերային չղջիկ	1	-	-
5	Miniopterus schreibersi Kuhl.	Սովորական երկարաթև չղջիկ	1	1	-
6	Vormela peregusna peregusna Guld.	Հարավռուսական խայտաքիս	1	1	-
7	Pelecanus onocrotalus Linneaus	Վարդագույն հավալուսն	1	-	-
8	Phalacrocorax pygmaeus Linneaus	Փոքր ձկնկուլ	2	-	-
9	Egretta alba Linneaus	Մեծ սպիտակ տառեխ	1	-	-
10	Plagadis falcinellus Linneaus	Քաջահավ	2	-	-
11	Anser anser Linneaus	Մոխրագույն սագ	2	-	-
12	Circaetus gollicus gollicus Gmelin	Եվրոպական օձակեր	1	1	-
13	Falco vespertinus vesoertinus	Սովորական մանրաբազե	1	1	-
14	Haematopus ostralegus longipes Buturlin	Կտցար-կաչաղակ	2	-	-
15	Aquila heliacal sovigni	Սովորական բլրային արծիվ	1	1	-

6.2.7 Պատմության և մշակութային հուշարձաններ

Արմավիրի մարզն ունի զբոսաշրջային մեծ ներուժ՝ իր հարուստ պատմության և մշակույթի հուշարձաններով: Այստեղ հաշվառված է 430 հուշարձան: Եզակի են նեոլիթյան բնակատեղին (մ.թ.ա VIII-V հազարամյակներ՝ Արատաշեն գյուղ), Մեծամորի հինգհազարամյա հնության (բրոնզեդարյան) մետաղաձուլարանը, նեոլիթ-էնեոլիթյան (Թեղուտ), վաղբրոնզեդարյան (Մոխրաբլուր), բրոնզեդարյան (Մեծամոր), ուրարտական (Արագած), հելլենիստական (Փարաքար) ժամանակաշրջանների կառույցներ ու բնակատեղիները: Արաքս գետի նախկին հունի ձախ ափին գտնվել է

հայոց նախկին մայրաքաղաքը՝ Արմավիրը: Արաքսի ու Ախուրյանի միախառնման տեղում նշմարվում են Երվանդաշատի փլատակները:

Այստեղ են նաև սբ. Էջմիածին Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այոր լիճը, Մուսալեռ և Սարդարապատ հուշահամալիրները:

Դրանք հնագույն բնակատեղիներ են, քարեդարյան կացարաններ, միջնադարյան գյուղատեղիներ, պաշտպանական, հոգևոր, տնտեսական կառույցներ, գերեզմանոցներ, կոթողներ և խաչքարեր և այլն: Ժամանակագրական առումով նրանք ընդգրկում են վաղնջական ժամանակներից մինչև մեր ժամանակները:

ՀՀ Կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի հանրապետության Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձանների» N 385-Ն որոշման հավելված 4-ի համաձայն ներկայացվում է միայն Արմավիր քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Հավելվածում Մայիսյան բնակավայրի հուշարձանները բացակայում են:

ԱՐՄԱՎԻՐ (ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ) քաղաք

Աղյուսակ 7

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)		Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (համանրապետական, տեղական)	Ծանոթագրություն[2]
1	2	3	4	5	6	7	8
1			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ		քաղաքային զբոսայգում	Տ	1

Բնության հուշարձաններ. ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն Արմավիրի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձաններ

Աղյուսակ 8.

1	ջրագրական հուշարձան «Մեծամոր» լիճ,	Տարոնիկ գյուղից մոտ 3կմ հյուսիս-արևմուտք գտնվող
2	կենսաբանական հուշարձան՝ «Ավազասերք. (պսամոֆիլ) բուսականություն»,	Վ.աղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
3	կենսաբանական հուշարձան՝ «Ջրաճահճային բուսականություն»	Մեծամոր լիճ

6.2.8. Հատուկ պահպանվող տարածքներ

Արմավիրի մարզում է գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Որդան կարմիր արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկն է: Գտնվում է ծովի մակարդակից 900-950 մետր բարձրության վրա :

«Որդան Կարմիր» արգելավայրը ստեղծվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի N61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա՝ Արազափ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում: Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի՝ «Որդան կարմիր» պետական արգելավայրի կանոնադրությունը հաստատելու մասին N 830-Ն որոշման՝ զբաղեցնում է 219.85 հա տարածք:

Արգելավայրն ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատից և Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ: Պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղադիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը:

Նկար 13.

Արմավիրի մարզ	«Որդան կարմիր» պետական արգելավայր	21985քկմ	1987

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները: Գործունեության տարածքը «Տատիկ» քարե քանդակ Երկրաբանական հուշարձանից գտնվում է 11 կմ հեռավորության վրա:

7. Բնակչության առողջության և անվտանգության, սոցիալական գործոնները և խնդիրները.

ՀՀ Արմավիրի մարզը բնակչության թվով և խտությամբ զիջում է միայն Երևան քաղաքին: ՀՀ Արմավիրի մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.9%-ը, բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում է 215 մարդ, իսկ Արմավիրի տարածաշրջանի բնակչության թվի համեմատ կազմում է 42.2%: Նկար 14

Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի՝ մարզի տարածքը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1231կմ^2, բնակչությունը՝ 259.7 հազար մարդ: Մարզն իր մեջ ներառում է 8 համայնք, 3 քաղաքային և 95 գյուղական բնակավայրեր: Բնակչության զբաղվածության ապահովումը մարզի համար կարևոր խնդիր է:

Բնակչությունը միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ՝ 6,6%, ասորիներ՝ 0,1%, քրդեր՝ 0,1%, ռուսներ՝ 0,2%: Մարզը հիմնականում գազիֆիկացված է, իսկ համայնքները կարիք ունեն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման: Հիմնախնդիր է անտառային տարածքների բացակայությունը, աղակալված, դեգրադացված, էրոզիացված հողերի առկայությունը, ստորգետնյա ջրերի անխնա շահագործումը:

Տարածքը Territory	1 231 քառ. կմ/ sq. km
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the RA, %	4.1
Համայնքներ, 2024թ. տարեսկզբի դրությամբ Communities, as of the beginning of 2024	8
Քաղաքներ Towns	3
Գյուղեր Villages	95
Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2024	259.7 հազ. մարդ/ ths. person
այդ թվում՝ *including:*	
քաղաքային urban	83.7 հազ. մարդ/ ths. Person
գյուղական rural	176.0 հազ. մարդ/ ths. Person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ.,% Share of marz population in the total population of the RA 2023, %	8.7
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ.,% Share of urban population size 2023, %	32.2
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	96 784.8 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	39 333.7 հա/ ha

Արմավիրի մարզը տարածքով ամենափոքր, սակայն խիտ բնակեցված և բնակչության թվաքանակով ամենամեծ մարզն է ՀՀ-ում: ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 96 784 հա, որից վարելահողերը՝ 39333,7 հա: Գյուղատնտեսության ոլորտում հիմնականում մշակվում են հացահատիկա-ընդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և

բոստանաբուծությունը՝ հացահատիկաընդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր։ Զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը։ Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում։

Արմավիրի մարզն հարուստ չէ օգտակար հանածոներով, առկա է 42 հանքավայր։ Արդյունաբերությունը մասնագիտացvած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում։

Համաձայն վիճակագրության ծառայության տվյալների՝ 2022թ.-ին Արմավիրի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 9.

Արդյունաբերություն	5.9%
Գյուղատնտեսություն	21.8%
Շինարարություն	3.6 %
Մանրածախ առևտուր	4.0 %
Ծառայություններ	1.5 %

Մարզի տարածքով է անցնում «Հարավկովկասյան» երկաթուղու Երևան-Թբիլիսի 70կմ երկարությամբ հատվածը։ Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով։

Մարզն ապահովված է բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով։ Գործում են 58 բժշկական կազմակերպություններ։ Այստեղ է գտնվում Զվարթնոց միջազգային օդանավակայանը, Արմավիրի ՀԱԷԿ-ը։ Համաձայն Արմավիրի մարզի 2017-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ Հայկական ԱԷԿ-ի աշխատակազմի շուրջ 78%-ը Արմավիրի մարզի բնակիչներ են։ Մարզում կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, էթնիկ, գյուղական, ագրո և էկո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը։

Նկար 15



Մարզի խոշորագույն գետը Արաքսն է, իր Սելավ-Մասարա, Սևաջուր և այլ վտակներով:

Առողջական խնդիրները. Համաձայն Առողջապահության Ազգային Ինստիտուտի 2023թ. տեղեկագրի՝ Արմավիրի մարզն ապահովված է առողջապահական հիմնարկներով: 10 000 բնակչի հաշվով մարզի ապահովվածությունը բժիշկներով կազմում է թոքաբան՝ 0, ինֆեկցիոնիստ՝ 0,20, հիվանդանոցային համաճարակաբան՝ 0,08, կլինիկական դեղագետ՝ 0,04 և այլն: 10000 բնակչի հաշվով միջին բուժանձնակազմը կազմում է 18.42, մակական բուժքույր՝ 5.42, ատամնաբուժական բուժքույր՝ 0,56, մանակաբույժ՝ 0,48, վիրաբույժ՝0,44, ակնաբուժ՝ 0,10, քիէ-կոկորդ՝ 0,15, մանկաբարձուհի՝ 3,80, միջին բժշկական կրթությամբ մասնագետներ՝ 5.25 և այլն: Մարզում վարակիչ հիվանդությունները 2020թ համեմատությամբ կազմել են 0,6%. 2020թ. 0,4 %- փոխարեն: 2022թ. չարորակ նորագոյացությունները կազմել են 140,5 մարդ/հ.ա, սրտի իշեմիկ հիվանդությունները՝ 30,3/հ.ա/, բնական շեղումներով հիվանդությունները՝ 2,6/հ.ա/, կրծքագեղձի չարորակ հիվանդությունները՝26,6/հ.ա/, թունավորումները՝ 1894,5/հ.ա/ ևա յլն:

Արմավիր խոշորացված համայնքն իր մեջ ներառում է ք. Արմավիրը, Նորավան, Մայիսյան, Մյասնիկյան, Լուկաշին, Խանջյան, Սարդարապատ, Այգևան, Լենուղի, Արաքս, Հացիկ բնակավայրերը:

Արմավիր քաղաքը մարզկենտրոնն է, գտնվում է Երևան քաղաքից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Քաղաքում գործում են արդյունաբերական և վերամշակող, գինու և կոնյակի, պահածոների, կաթի և կաթնամթերքի, հացի, մոլիբդենի հարստացման, հաստոցաշինական, ֆուրնիտուրայի և այլ շինանյութերի, կահույքի արտադրության գործարաններ, փոքր և միջին բիզնեսով զբաղվող արտադրական և սպասարկման ծառայություններ, բժշկական կենտրոն, ստոմատոլոգիական կենտրոններ: Արմավիր իրականացնող քաղաքում գործում է խորդենու վերամշակման գործարան, որը միակն

է Հայաստանում: Համաձայն Արմավիր համայնքի 2022-26թթ. հեռանկարային զարգացման ծրագրերի՝ համայնքում գործում են 370 առևտրի, 76 սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի՝ 100, 30 հանրային սննդի, 40 կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտներ, 2 գյուղմթերքի շուկա, 4 առևտրի կենտրոն, Համաձայն վիճակագրական կայք էջի՝ 2024թ. տարեսկզբին բնակչությունը կազմում է 28.7 հազ. մարդ:

Տարածքում տեղ-տեղ հանդիպում են ճահճային հողակտորներ՝ գետերի ջրի արտահոսքի առաջացման հետևանքով:

Մայիսյան բնակավայրը համայնքների խոշորոցման արդյունքում ներառվել է Արմավիր համայնքի կազմում: Գտնվում է մարզկենտրոնից 6 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակարդակից 1660մ բարձրության վրա: գյուղի հողային ֆոնդը 2023թ. դրությամբ կազմում է 1990,0հա: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: 2024թ. տարեսկզբին բնակչությունը կազմում է 2069 մարդ: Բնակավայրում առկա է 310 աշակերտի համար նախատեսված դպրոց:

Գյուղում նախատեսվում է խորքային հորերի վերականգնում, լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում:

Գյուղում առկա է Արցախյան առաջին և երկրորդ պատերազմների և Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան:

Համայնքի և բնակավայրի հիմնախդիրներն են ոռոգման, խմելու ջրի համակարգերի արդիականացումը, փողոցային լուսավորության անցկացումը, փողոցների հիմնանորոգումը, մանկապարտեզների, բուժհաստատությունների վերանորոգումը և այլն: Համայնքում խնդիրներ կան նաև արտադրանքի իրացման, բնակիչների շրջանում սոցիալական աջակցության, սոցիալական կարիքների բավարարման մեխանիզմների բացակայության, աղբահանության ոչ բավարար մակարդակի, թափոնների ոչ բավարար կառավարման, գերեզմանոցի ցանկապատման, կանաչապատ տարածքների պահպանման հետ կապված, որոնք կարող են պատճառ հանդիսանալ բնակչության առողջության, սոցիալ-տնտեսական վիճակի, վերջիններիս հետ կապված ռիսկերի առաջացմանը: Խնդիրներ և ռիսկեր կան նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղպաշտպանության միջոցառումների իրականացման ոլորտներում՝ պայմանավորված ապաստարանների, հակաճառագայթային թաքստոցների, պաշտպանական միջոցների բացակայությամբ, հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովման հետ:

Համաձայն «Արմավիր-3»միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթի, Մայիսյան բնակավայրի գյուղատնտեսության նպատակային նշանակության հողերը՝ 1266,74հա, բնակավայրերի հողերը՝ 304,28հա, արդյունաբերության՝ 16հա, էներգետիկայի՝ 383,62հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 8,16հա, ջրային՝ 11,18հա:

8. Հիմնադրութային փաստաթղթի մոտեցումների բոլոր հնարավոր տարբերակների (այդ թվում՝ զրոյական) համեմատությունը և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորումը.

ՌԷԳ-ի շրջանակներում դիտարկվել է հիմնադրութային փաստաթղթի իրականացման այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը։

Այլընտրանք 1. Զրոյական տարբերակ-նշանակում է հիմնադրութային փաստաթղթի դրույթների չիրականացում, ինչը ենթադրում է հետևյալ բացասական ազդեցությունները.

- չեն կատարվելու 2 091 192 203 դրամի չափով ներդրումներ, որը կնպաստեր ՀՀ-ում գյուղատնտեսության մեջ արդիական տեխնոլոգիաների հիման վրա անասնաբուծական ֆերմաների զարգացմանը։ Չի ապահովվի 2022 թ. մարտի 3-ի ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» N 276-Լ որոշման պահանջները։
- Չի բարելավվելու տեղական մսամթերքի նկատմամբ ՀՀ բնակչության պահանջարկը։
- Կխոչընդոտվի համայնքի հեռանկարային զարգացումը՝ գյուղատնտեսության մեջ ներդրումներ չեն կատարվի։
- Չեն բացելու նոր աշխատատեղեր, որի հետևանքով չի բարելավվի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները։
- Չի բարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, չի ավելանա համայնքային բյուջե վճարվող գումարները, որոնք կնպաստեն համայնքում առկա հիմնախդիրների լուծմանը։

Այլընտրանք 2. Տարածքային այլընտրանք.

- Նոր տարածքների ընտրությունը կամ օտարումը կհանգեցներ նոր տարածքների վրա զգալի ազդեցությունների, մասնավորապես հողային ռեսուրսների վրա։
- Կկրճատվեր գյուղատնտեսական նշանակության տարածքները, ինչը կհանգեցներ գյուղմթերքների կամ արոտավայրերի լրացուցիչ կրճատման։
- Արդեն աղբոտված կիսաքանդ գոմերի տարածքը չէր բարեկարգվի և մաքրվի։

Այլընտրանք 3 .Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների այլընտրանք
Դիտարկվել է համակցված կերի գործարանը չկառուցելու և կերը այլ գործարաններից տեղափոխելու տարբերակները, ինչը հնարավոր չէ կիրառել հարակից տարածքներում նշված գործարանների բացակայությունը, հեռավորությունը, և հսկայական ռեսուրսային ծախսերը հաշվի առնելով։

Այլընտրանք 4. Դիտարկվել է գոմաղբը և դիակիզումը այլ գործարաններում իրականացնելու տարբերակը, ինչը հնարավոր չէ կիրառել հաշվի առնելով հարակից

տարածքներում նշված գործարանների բացակայությունը, հեռավորությունը, և հսկայական ռեսուրսային ծախսերի, ինչպես նաև բազմաթիվ անհարմարությունները։

Ընտրված տարբերակի հիմնավորումը. հիմնադրույթային փաստաթղթով ներկայացված տարածքը նախկինում գործող անասնապահական ֆերմայի տարածք է, որն արդեն ենթարկվել է անտրպոգեն ազդեցությունների։ Ներառվող տարածքները բուսածածկից զուրկ չոր անապատային տարածքներ են։ Այն նախկինում եղել է գործող, այժմ լքված, խախտված և աղբոտված տարածք։ Տարածքն ընտրվել է նաև, ելնելով Արմավիր համայնքի տարածքում գյուղատնտեսության զարգացման հնարավորություններից։ Ներդրումային ծրագրի իրականացման դեպքում՝ հիմնադրութային փաստաթղթով նախատեսված գործունեությունների շրջանակներում կվերակառուցվեն և կկառուցվեն խոզաբուծական ֆերմաններ, որը կապահովվի խոզամթերքների նկատմամբ բնակչության պահանջարկը, ինչպես նաև համայնքում կստեղծվեն նոր աշխատատեղեր։

Ծրագրի իրականացումը կնպաստի.

- անասնաբուծական արտադրանքի նկատմամբ բնակչության պահանջարկի բավարարամանը,
- տեղական մսի արտադրության խթանմանը, ինքնարժեքի իջեցմանը,
- տեղական անասնաբուծական արտադրանքի արտադրության ծավալների ավելացմանը,
- անասնապահական ճյուղի գրավչության մակարդակի բարձրացմանը,
- համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավմանը, կենսամակարդակի բարձրացմանը։

Կատարվել են այլընտրանքային տարբերակների համեմատական վերլուծություն մարդու առողջության, շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցության տեսանկյունից։

Համեմատության արդյունքները ներկայացված են աղյուսակում	Կիրառվող քաղաքականություն	Այլընտրանք 1	Այլընտրանք 2	Այլընտրանք 3	Այլընտրանք 4
	Որևէ պլան չի իրականացվել/զրոյական տարբերակ	Ծրագրի դրույթների իրականացումը նոր տարածքների վրա	Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների այլընտրանք: Կերը այլ գործարաններից տեղափոխելը,	Գոմաղբի վարակազերծումը, կենդանիների մնացորդների դիակիզումը իրականացնելու այլ տարածքներում :	Ընտրված տարբերակը
ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ	-	-	-	-	+
	Եթե արտանետման չափաքանակները և ազդեցությունները գտնվում են նորմայի սահմաններում ապա ձեռնարկությունները կարող են իրենց գործունեությունները իրականացնել:	Նոր տարածքների վրա զգալի ազդեցություններ:	Դժվար իրականանալի և ֆինանսական մեծ ներդրումներ պահանջող տարբերակ, նկատի ունենալով Հայաստանի բարդ ռելիեֆային, կլիմայական պայմանները, անբարեկարգ ճանապարհները;	Եվս դժվար իրականանալի և ֆինանսական մեծ ներդրումներ պահանջող տարբերակ է, նկատի ունենալով Հայաստանի բարդ ռելիեֆային, կլիմայական պայմանները, անբարեկարգ ճանապարհները, որը կարող է վտանգել նաև մարդու առողջությունը՝ թափոնների տեղափոխման ընթացքում առաջացող հնարավոր վտանգավոր երևույթների հետևանքով՝ անսարքություն, վթար, միաժամանակ ենթադրվում են ծախսերի մեծացում և բազմաթիվ անհարմարություններ:	Այս տարբերակը կիրառելի տարբերակ է, քանի որ բոլոր նախատեսվող գործունեությունները նույն տարածքում իրականացնելը ավելի քիչ ֆինանսավորում պահանջող է: Այս տարբերակը բնապահպանական, ինչպես նաև սոցիալական առումով ամենանախընտրելի տարբերակն է, որը հնարավորություն կտա ստանալ որակյալ և մատչելի սննդամթերք;:

ՕԴ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒ-ԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱԶ-ՄԱ-ԶԱՆՈՒԹՅՈՒՆ	+	-	-	-	+/-
	Մթնոլորտային օդի պահպանության կառավարումը ՀՀ-ում իրականացվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121-Ն ((ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ. ՀՕ-522-Ն) ՀՀ օրենքով և օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերով: ՀՀ-ում, հատկապես մեծ քաղաքներում, լուրջ խնդիր է հանդիսանում օդի աղտոտվածությունը, որը կապված է տրանսպորտային միջոց-ների մեծ կուտակումների հետ: Այստեղ անհրաժեշտ է կիրառել նորագույն տեխնիկա, նոր ֆիլտրեր, շրջակա միջավայրի աղտոտվածությունը նվազացնելու և արտանետումները սահմանային թույլատրելի նորմաներին հասցնելու նպատակով:	Նոր տարածքների օտարումը, իր հետ բերելու է նոր ճանապարհների կառուցում, նոր տարածքներում շինարարական աշխատանքներ, ինչը կենթադրի նոր ազդեցություններ: Նոր տարածքների ընդգրկումը լի է կենսաբազմազանության վրա նոր ազդեցություններով:	Տարբերակը Հայաստանում այնքան էլ ողջունելի չէ, քանի որ նշված գործարանները գտնվում են մեծ հեռավորությունների վրա, հատկապես ձմռան ամիսներին կերի տեղափոխումը լի է մեծ ազդեցություններով և ծախսերով:	Գոմաղբի կամ հիվանդ կենդանիների կամ մնացորդների տեղափոխումը ևս կախված է մեծ ծախսերի և անհարմարությունների հետ: Ծանրաբեռնված մեքենաները գազով աշխատելիս քաշից ընկնում են, իսկ բենզինով աշխատելիս, ծարաբեռնվածության հետևանքով ավելի շատ են աղտոտում շրջակա միջավայրը: Նշված տարբերակի կիրառումը լի է տարբեր հիվանդությունների վարակների տարածման ռիսկերով:	Ֆինանսական տեսանկյունից ելնելով այս տարբերակն ավելի նախընտրելի է, քանի որ բոլորը կտեղակայվեն հարակից, մոտ տարածքներում, որոշակիորեն կավելանա մթնոլորտային աղտոտվածությունը, և բոլոր միջոցառումները իրականացնելու և մաքրող սարքավորումները տեղադրելու պարագայում ազդեցությունները կլինեն նորմայի սահմաններում: Կիսաքանդ տարածքներում գործունեությունների իրականացումը կենսաբազմազանության վրա նոր ազդեցություններ չի ենթադրում: Կլիմայի վրա ազդեցությունները արտանետումների կրճատման, մաքրող սարքավորումների ներդրման արդյունքում կլինեն նվազագույնը:

ՀՈՂ, ԵՐԿՐԱԲԱ-ՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-	0
	Որպես կանոն նախկին գոմերը կառուցված են հին ստանդարտներով և չվերակառուցելու արդյունքում տեղի կունենա հողերի վրա աղբակույտերի կուտակում, ինչպես նաև ստորերկրյա ջրերի աղտոտում: Նախկին գոմերի տարածքները ցանկապատված չեն, որը կնպաստի հարակից հողերի աղտոտմանը:	Մեծ խնդիր է հողերի աղտոտվածությունը, նոր տարածքների օտարման դեպքում:	Հայաստանի ռելիեֆը, ճանապարհների որակը էապես բարդացնում են կերի փոխադրումը Հայաստանի ամբողջ տարածքից մի վայր: Միևնույն ժամանակ սա թանկացնում է խոզի մսի ինքնարժեքը: Զգալի է կերը տարածք չհասցնելու ռիսկը:	Մեծանում են տեղափոխման արդյունքում հողերի աղտոտման ռիսկերը, և ծախսերը:	Այս տարբերակը նախընտրելի է երկար տարիներ մարդու ազդեցության գոտում գտնվող տարածքներում, բոլոր նախատեսվող գործունեությունների կենտրոնացումը:
ՄԱԿԵՐԵՎՈՒԹ ԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՋՐԵՐ	-	-	0/-	-	0/-:
	Ջրերի աղտոտումը անօրինական աղբավայրերի թափոնների պատճառով խնդիր է բոլոր գետավազաններում:	Եթե նոր տարածքներ զբաղեցվեն, մակեևութային ջրերը ավելի շատ կաղտոտվեն՝ ճանապարհների վրա ավտոմեքենաների ավելի շատ արտանետումների արդյունքում:	Կերի ճանապարհային փոխադրումը կարող է ավելացնել մակերևութային ջրերի աղտոտումը փոշու և ավտոմեքենաների արտանետումների արդյունքում:	Ավելի շատ ավտոմեքենաներն ու առավել մեծ հեռավորությունները կմեծացնեն բնապահպանական ճնշումը Հանրապետությունում: Ավտոմեքենաերի արտանետումները ի վերջո կաղտոտեն հարակից ջրային ռեսուրսները: Վթարային իրավիճակներում ամբողջ վարակը կարող է հոսել ջրային ավազաններ: Առկա վարակի առաջացման ահագնացող ռիսկեր:	Գործունեությունների կենտրոնացումը և մաքրման կայանների ներդնումը զերծ կպահի ջրային ավազանները լրացուցիչ աղտոտումից և աղբոտումից: Սակայն սա տեղի կունենա միայն եթե գործունեությունները իրականացվեն միջազգային լավագույն փորձի / ԵՄ պահանջների համաձայն՝ կանխելով մակերևութային ու ստորգետնյա ջրային ռեսուրսների աղտոտումը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ		-	-	-	+/-
	1.Բնակչության թիրախային խմբերի հիվանդացության վերլուծություններ չեն իրականացվում, 2.Բնակչության թիրախային խմբերում հիվանդացության և գործոնների միջև պատճառահետևանքային կապը հաստատող հետազոտություններ և/կամ մշտադիտարկումներ չեն իրականացվում: 3.Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգը դեռևս լիարժեք չի երաշխավորում բնակչության առողջության համար սննդային գործոնով պայմանավորված բացասական ներգործության կանխարգելումը և այդ առումով առկա են մի շարք լուծում պահանջող հիմնահարցեր: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել այդ բնագավառը	Այս տարբերակի կիրառումը կընդգրկի նոր տարածքներ, կենթադրի նոր ազդեցություններ, ինչն էլ շղթայի ավարտին զգալի ազդեցություն կունենա մարդու առողջության վրա:	Մեքենաներով փոխա-դրումը կավելացնի արտանետումների քանակը և մարդու վրա ազդեցությունները:	Մեքենաներով փոխադրումը, բազմաթիվ անհարմարություններ կարող է ստեղծել և աղբոտվածության, և գարշահոտության, վարակ արտանետումների մեծացում: Վարակների տարածման ահագնացող ռիսկ:	Նմանատիպ համակարգի ներդնումը, գործունեությունների կենտրոնացումը և միջոցառումների պահպանումը առավել արդյունավետ է և քիչ ծախսատար:

	կարգավորող միասնական քաղաքականության մշակում և իրականացում:				
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ		-	-	-	+
	Կիսաքանդ, աղբավայրի վերածված գոմերի տարածքը նույն վիճակում թողնելը սոցիալական կամ տնտեսական որևէ դրական ազդեցություն չի կարող ենթադրել:	Գործարանների մեծ հեռավորությունները, կիսաքանդ տարածքներում չիրականացնելը, նոր տարածքների օտարումը կարող են կրճատել, օրինակ գյուղ,նշանակության հողերը:	Առանձին տարածաշրջանների աշխարհագրական դիրքը և ձմռան ամիսներին ճանապարհներին ժամանակավոր անանցանելիությունը կխոչընդոտի կերի կանոնավոր փոխադրման գործընթացը	Առանձին տարածաշրջանների աշխարհագրական դիրքը և ձմռան ամիսներին ճանապարհներին ժամանակավոր անանցանելիությունը կխոչընդոտի գոմաղբի կամ վարակված կենդանիներ փոխադրումը և մեծ անհարմարություններ կստեղծի բնակչության համար:	Նույն տեղում կենտրոնացումը, աշխատատեղերի ստեղծում, համայնքում ներդրումների իրականացում:

Ներկայացված ռազմավարական այլընտրանքները համեմատվել են իրենց հնարավոր բնապահպանական և առողջապահական հետևանքների տեսանկյունից: Ակնկալվող փոփոխությունը մատնանշելու համար օգտագործվել են հետևյալ նշանները.

+ ավելի լավ

0 – նույնը

– ավելի վատ

+/– դրական և բացասական ազդեցություններ:

9. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հիմնադրութային փաստաթղթի դրույթների հնարավոր ազդեցության մասշտաբները. Հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության հետևանքով հնարավոր ազդեցությունների շրջանակները.

ՌԷԳ հաշվետվությամբ նախատեսվում է Արմավիրի մարզում ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխան արդիական սարքավորումներով խելացի խոզաբուծական տնտեսություն՝ ավտոմատ կառավարման համակարգով։

Անասնաբուծության զարգացման ներդրումային ծրագրի՝ ՌԷԳ հաշվետվության շրջանակում որոշվում է բնապահպանական և սոցիալական ազդեցությունները՝ օդային ավազանի, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության, ինչպես նաև մարդու առողջության առումով։ Ծրագրի իրականացման շրջանակներում հնարավոր են.

- մթնոլորտային օդի աղտոտում՝ արտանետումների միջոցով,
- մակերևութային և գրունտային ջրերի աղտոտում՝ արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտում՝ կոշտ կենցաղային թափոններով,
- արտադրական թափոնների կառավարում,
- արտակարգ իրավիճակների առաջացում,
- աղմուկի և թրթռումների ավելացում,
- մարդու առողջություն և անվտանգություն։

ՌԷԳ հաշվետվության շրջանակներում շրջակա միջավայրի բաղադրիչների ազդեցությունների գնահատման համար հիմք են ծառայել տարածաշրջանին առնչվող միկրոռեգիոնալ զարգացման ծրագրերը, ոլորտին առնչվող կառավարության որոշումները, Առողջապահության նախարարի հրամանները և այլ նորմատիվային փաստաթղթեր։

ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում ներդրումային ծրագրերի իրականացումը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը, որը համահունչ է 2022 թ. մարտի 3-ին ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին»N 276-Լ որոշման պահանջներին։ Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս ապահովել գյուղատնտեսության ոլորտի զարգացումը, կենդանիների պահման և բազմացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, տարածքների, սարքավորումների ու նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովումը։

9.1. Օդային ավազան. համայնքում մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներից։ Մայիսյան բնակավայրում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ), քանի որ բնակավայրում չկան օդային ավազան վտանգավոր արտանետումներ ունեցող ձեռնարկություններ։

Հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունների իրականացման շրջանակներում հնարավոր է լինեն օդային ավազան հնարավոր արտանետումներ.

- գոմերից արտանետվող հոտերի,
- կերի արտադրամասից և արտադրական այլ գործողություններից՝ փոշու տեսքով,
- այրման վառարանների աշխատանքի ընթացքում՝ ազոտի օքսիդներ(NO), ածխածնի օքսիդ(CO) , ծծմբաջրածնի, գոլորշու տեսքով:

Հնարավոր արտանետումները պետք է վերահսկվեն և կրճատվեն համապատասխան միջոցառումների կիրառմամբ:

9.2.Հողային ռեսուրսներ. Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություններ կարող են ունենալ.

- արտադրական հոսքաջրերը,
- թափոնների ոչ բավարար կառավարումը:

Ըստ կատարված ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության արդյունքների, տեղամասի գրունտները սպիտակ, դեղնավուն փոշային կավավազներով (սպիտակահողեր), խճի, մանրախճի հետ, տեղ-տեղ առկա մեծաքարերով: Համաձայն «Արմավիր-3» միկրոռեգիոնալ տարածական զարգացման ծրագի՝ համայնքների տարածքի գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով և նոր շենքերի և շինությունների տեղադրման ընտրությունը սահմանափակված չէ:

Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակներում նախընտրված տարածքն իրենից ներկայացնում է խոզերի բուծման համար նախկինում օգտագործված, այժմ կիսաքնդված կառուցներով խախտված, լքված, աղբոտված տեղամաս, որտեղ հողի բերրի շերտը բացակայում է: Ելնելով վերոգրյալից, համայնքի տարածքում նախատեսված ծրագրի իրականացումը հողային ռեսուրսների վրա էական ազդեցություն չի թողնի:

9.3.Ջրային ռեսուրսներ.

Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են: Մայիսյան գյուղին ամենամոտիկ գետը Մեծամորն է, որը անցնում է Մեծամոր քաղաքի մոտով: Իսկ ծրագրով իրականացվող տարածքում մակերևութային ջրային հոսքերը բացակայում են: Համաձայն կատարված երկրաբանահետախուզական եզրակացության՝ տարածքում գրունտային ջրերը գտնվում են մեծ խորությունների վրա: Փաստացի փորված մինչև 6,0մ խորություններում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել:

ՌԷԳ հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունների իրականացման դեպքում անհրաժեշտ է մաքրման կայանի տեղադրում՝ մակերևութային և գրունտային ջրերի աղտոտման բացառման նպատակով:

9.4. Կենսաբազմազանություն. ծրագրով իրականացվող տարածքի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է, բացակայում են ծառերը և ծառաթփային բուսականությունը, տարածքը երկար տարիներ գտնվել է մարդու ազդեցության գոտում:

Կենդանական աշխարհը հիմնականում ազդեցության է ենթարկվելու հողային աշխատանքների ընթացքում: Բայց վերջիններս իրենց տեղաշարժման հնրավորությամբ կտեղափոխվեն այլ միջավայր:

Ծրագրով նախատեսված տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, այժմ դրանք դատարկ, աղբոտված տարածքներ են: Ուստի ծրագրով նախատեսված դրույթների իրականացման ընթացքում կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

9.5. Թափոններ. համաձայն «Արմավիր 3» միկրոռեգիոնալ ծրագրի՝ համայնքում առկա են ձեռնարկություններ, որոնց գործունեության հետևանքով առաջանում են արդյունաբերական թափոններ՝ 6651,6 տ/տարի ընդհանուր քանակով:

Ծրագրով նախատեսվող գործունեությունների շրջանակներում հնարավոր առաջացած թափոնատեսակներն են.

- կենդանական գոմաղբ,
- անասունների մորթից և անկումից առաջացող մնացորդներ,
- կենդանիների այրումից առաջացած մոխիր,
- կերի արտադրական գործընթացներից առաջացող փոշի,
- կենցաղային աղբ:

Տվյալ ծրագրով իրականացվող գործունեության ընթացքում առաջացող թափոնները, հատկապես գոմաղբը ենթակա է վերամշակման: Գոմաղբն առաջանալու է կենդանիների կենսաբանական գործունեությունից: Այն անհրաժեշտ է ենթարկել վերամշակման՝ հատուկ ռեագենտների, բակտերիաների, գելմինտների միջոցով, որի արդյունքում կստացվի մաքրված օրգանական պարարտանյութ:

Կենդանիների այրումից առաջացած մոխիրը կառաջանա կենդանիների անկման և մորթի հետևանքով՝ այրման վառարաններում դրանց այրելու գործընթացից:

Արտադրական գործընթացում կառաջանա նաև այրման արդյունքում երկրորդական թափոններ՝ մոխիրի, փոշու տեսքով:

Կարևոր է թափոնների ոչնչացման համար կիրառել վառարանային այրման եղանակը, քանի որ Հայաստանի հանրապետությունում կարևոր է թափոնների կառավարման նման տարբերակը՝ պայմանավորված հանրապետությունում վտանգավոր թափոնների տեղակայման համար պոլիգոնների բացակայությամբ: Առաջացող առաջնային և այրումից առաջացող երկրորդական թափոնների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կանխարգելելու նպատակով պետք է հիմնադրույթային փաստաթղթի շրջանակներում իրականացվող գործունեությունների իրականացման փուլում ճիշտ կազմակերպել թափոնների կառավարումը, որպեսզի ունենալ նվազագույն ազդեցություն, ինչպես նաև չնպաստել համայնքի աղբավայրերի լրացուցիչ ծանրաբեռնվածության ավելացմանը, որը կարող է վտանգել բնակչության առողջությանը:

Կարևոր է նաև տեսակավորման աղբամանների տեղադրումը, որը կնպաստի կենցաղային աղբի ճիշտ կառավարմանը, աղբավայրերի բեռնաթափմանը և շրջակա միջավայրի պահպանմանը:

9.6.Պատմամշակութային և բնության հուշարձաններ. Հիմնադրույթային փաստաթղթով ներկայացված տարածքը չի առնչվում Արմավիր համայնքի և Մայիսյան բնակավայրի պատմամշակութային և բնության հուշարձանների հետ: Ծրագրի դրույթների իրականացման գործունեություններն նախատեսվում են ծրագրով ներառված տարածքներում, որտեղ նախկինում տեղակայված են եղել անասնապահական գոմերը:

Ուստի պատմամշակութային և բնության հուշարձանների վրա ազդեցություններ չեն

կանխատեսվում։

9.7 Արտակարգ իրավիճակներ.հաշվետվության շրջանակներում վեր են հանվել հնարավոր արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացումը, որոնք կապված են.

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում,փոթորիկ),
- հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ։

Ծրագրի իրականացման տարածքի համար կատարվել է ինժեներա-երկրաբանական հետազոտություն, հանաձայն որի տարածքում բացակայում են սողանքային երևույթները, քարաթափությունը։ Տարածքը բարենպաստ է շինարարության համար։

Ծրագրի դրույթներով նախատեսվող գործունեությունների շրջանակներում պետք է պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, կիրառել համապատասխան բնապահպանական միջոցառումներ։

9.8 Աղմուկ. տարածաշրջանում աղմուկի մակարդակը բարձր չէ, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները, իսկ փողոցներով տրանսպորտային միջոցների երթևեկությունը աննշան է։

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան։

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում։ Հարակից տարածքում տեղակայված բնակարանների ներսի համար թույլատրելի չափը՝ 55 դԲ (A)։

Ծրագրի իրականացումը չի հանգեցնի հարակից տարածքում շրջակա միջավայրի աղմուկի մակարդակի բարձրացմանը, բնակավայրի հեռավորության հետ կապված։ Աղմուկի մակարդակի բարձրացում հնարավոր է կերի արտադրամասի տարածքում, սակայն ժամանակակից աղմուկի մակարդակը չգերազանցող սարքավորումների կիրառմամբ, այն կլինի նորմերի սահմաններում։

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 90 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն)։

Ծրագրով իրականացվող նախատեսվող գործունեությունների շրջանակներում պետք է պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, վերը նշված հրամանների պահանջները, կիրառել համապատասխան բնապահպանական միջոցառումներ։

9.9 Մարդու առողջություն և անվտանգություն.

մարդու առողջության խնդիրները կապված են լինելու

- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Ծրագրի դրույթների իրականացումը, ինչպես նաև ծրագրի շրջանակներում նախատեսված գործունեությունները սերտ առնչվում են մարդու առողջության և անվտանգության հետ, հատկապես սննդի անվտանգության հետ, իրենց իրականացումը կարող է ազդեցություններ և ռիսկեր պարունակել:

- Կարող են լինել կենդանիների զոոնոզային վարակների ռիսկ և տարատեսակ հիվանդություններ և կենդանիների անկումներ:
- Հակաանասնահամաճարակային տարեկան և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման հրահանգներով սահմանված միջոցառումները ժամանակին չիրականացնելու դեպքում կենդանիների հետ շփումը, արածեցումը, ջրելը, տեղափոխումը կարող են ռիսկեր պարունակել.
- Կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հրահանգներով արգելված սատկած կենդանիների մաշկազերծումը կամ դիահերձումը կամ այդ հիվանդություններով հիվանդ կենդանիների սանիտարական սպանդը կամ մորթը ռիսկեր պարունակող գործոններ են:
- Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ նաև խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման), անբավարար հիգիենիկ պայմանների պատճառով:

9.10 Լանդշաֆտ.Բարեկարգում.Հիմնադրույթային փաստաթղթով գործողությունների նախատեսվող տարածքը լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի առաջացնի, քանի որ այն նախկինում կառուցապատված է եղել: Բացի այդ նախատեսվող գործունեությունների համար նախատեսվող շինությունները վիզուալ սահմանափակումներ չեն առաջացնելու՝ բարձրահարկ չլինելու հանգամանքով պայմանավորված:

Ծրագրով նախատեսված տարածքը կբարեկարգվի:

Կանաչապատում. համայնքում կանաչապատման նորմատիվային ցուցանիշները շատ ցածր են գոյություն ունեցող նորմատիվներից, հատկապես 1 շնչին ընկնող ընդհանուր կանաչ տարածքների ցուցանիշներից: Բնակավայրի կանաչապատման ցուցանիշների բարելավման համար անհրաժեշտ է ծրագրով նախատեսվող գործունեությունների շրջանակներում իրականացնել կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ՝ որպես օդը մաքրող միջոց:

10. Հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց արդյունավետությունը, բավարարությունն ու ծախսերը.

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում

նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Ծրագրի ՌԷԳ հաշվետվությունում նախատեսված բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

10.1 Օդային ավազան. օդային ավազան փոշու արտանետումներ կանխելու նպատակով կիրառել բարձր արդյունավետության զտիչներ,

- ✓ դիակիզարանից և արտադրամասերից, գոմաղբի վերամշակման գործընթացում գազերի, փոշու արտանետումների կանխարգելման ուղղված միջոցառումների կիրառում,
- ✓ դիակիզարանի խողովակի վրա հսկիչ սարքերի տեղադրում՝ օդային ավազան արտանետումները վերահսկելու նպատակով,
- ✓ ժամանակակից ֆիլտրերի կիրառում՝ օդային ավազան արտանետումների քանկական և որակական ցուցանիշները մեղմելու նպատակով,
- ✓ Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (ԱՕՊ) ժամանակահատվածում (քամու արագություն, փոթորիկ) աշխատանքների վերահսկում, անհրաժեշտության դեպքում դադարեցում:

10.2. Ջրային ռեսուրսներ. ջրային ռեսուրսների ազդեցությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել.

- ✓ գոմաղբի վերամշակման և վնասազերծման ընթացքում առաջացող հոսքաջրերի ներթափանցման բացառում ջրային ռեսուրսներ,
- ✓ մաքրման կայանի կառուցում հողային և ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հոսքը կանխելու նպատակով,
- ✓ բացառել արտադրական և կենցաղային նպատակներով օգտագործվող հոսքաջրերի բաց թողումը շրջակա միջավայր,
- ✓ գոմաղբի վերամշակման և վնասազերծման ընթացքում առաջացող հոսքաջրերի մաքրումն իրականացնել մաքրման կայանների միջոցով՝ կեղտաջրերի ներծծումը գրունտային ջրեր բացառելու նպատակով,
- ✓ մաքրված հոսքաջրերի ուղղորդված օգտագործում՝ ոռոգման նպատակով:

10.3. Հողային ռեսուսրներ. հողային ռեսուրսների պահպանման նպատակով անհրաժեշտ է նախատեսել.

- ➢ գոմաղբի վերամշակման և վնասազերծման ընթացքում առաջացող հոսքաջրերի հողային ռեսուրսների ուղղորդման բացառում,
- ➢ մաքրման կայանի տեղադրում՝ հողային ռեսուրսները կեղտաջրերով աղտոտելուց խուսափելու համար:

10.4. Կենսաբազմազանություն.

գործունեության իրկանացման հետևանքով կենսաբազմազանության վրա հնարավոր

ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու համար նախատեսվում է.

- ✓ գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,
- ✓ հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

10.5. Թափոն. թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել.

- ✓ գոմաղբի վերամշակման, վարակազերծման գործընթացների ապահովում՝ ժամանակակից ազդանյութերի/ռեագենտների/ միջոցներով,
- ✓ գոմաղբի նախնական մաքրման՝ մանրաէազերծման եղանակի կիրառում՝ գոմաղբին բնորոշ հոտից խուսափելու համար,
- ✓ կենդանիների մորթից և անկումից առաջացած մնացորդների վնասազերծում՝ այրման վառարանների միջոցով՝ հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից խուսափելու համար,
- ✓ վերամշակումից առաջացած մոխիրը և կենցաղային աղբը տեղափոխում աղբավայր, քանի որ տարածաշրջանում չկան աղբավերամշակման գործարաններ,
- ✓ կենցաղային աղբի համար տեսակավորման աղբամանների նախատեսում:

10.6.Պատմամշակութային և բնության հուշարձաններ. Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվող տարածքներում Պատմամշակութային և բնության հուշարձանները բացակայում են, միաժամանակ.

- ✓ ծրագրի դրույթների իրականացման ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:

10.7. Արտակարգ իրավիճակներ. արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել.

- ✓ գոմերում նախատեսել օդափոխման և միկրոկլիմայի պահպանման համակարգ
- ✓ հրդեհաշիջման համակարգերի, հակահրդեհային հիդրանտների տեղադրում,
- ✓ հրդեհամարման բաքերի կիրառում՝ ներքին հրդեհների մարման նպատակով,
- ✓ նախատեսվող շինությունների համար նախատեսել հողանցում և շանթապաշտպանություն,
- ✓ էվակուացիոն ելքերով ապահովում՝ մարդկանց և կենդանիների համար, տարածքում փակցնել պաստառներ կամ ցուցանակներ:

10.8. Աղմուկ և թրթռում. աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- ✓ արտադրությունում կիրառել ձայնակլանիչ նյութեր և կոնստրուկցիաներ,
- ✓ արտադրությունում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,
- ✓ տեխնիկայի և մեքենաների համար կիրառել համապատասխան խլացուցիչներ,
- ✓ պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը։

10.9. Մարդու առողջություն և անվտանգություն.

Նկատի ունենալով, որ ծրագրային փաստաթղթում ներառված գործունեությունները սերտ կապված են մարդու առողջության և անվտանգության հետ, ինչն էլ ուղղակիորեն պայմանավորված է կենդանիների առողջությանբ և զոոնոզային վարակներից պաշտպանությանը, ուստի ծրագրի շրջանակներում նախատեսվող գործունեության ձեռնարկողները պարտավոր են ապահովել կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը և ամբողջությամբ պահպանել հետևյալ պահանջներն ու պայմանները։

Աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է.

- ✓ տեխնոլոգիայի մշակման համար օգտագործել ՀՀ սանիտարական, տեխնոլոգիական և անասնաբուժական նորմերը և ԵՄ ստանդարտները, ներառյալ կենդանիների բարեկեցության ստանդարտները (welfare standards),
- ✓ առաջատար ավտոմատ սարքավորումների, անասունների խմելու և կերակրման ավտոմատ համակարգի կիրառում,
- ✓ գոմաղբի վարակազերծում՝ մանրէաբանական, մեխանիկական և կենսաբանական եղանակներով,
- ✓ կենդանիների հետ մարդկանց նվազագույն շփում, համապատասխան արտահագուստով, դիմակով, ձեռնոցներով ապահովում,
- ✓ աշխատանքի սանիտարահիգենիկ պայմանների ապահովում, վարակազերծման միջոցներ։
- ✓ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջների պահպանում,
- ✓ նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- ✓ անասնաբուժական ծառայությանն անհապաղ տեղեկացնել կենդանիների հանկարծակի և զանգվածային հիվանդացության կամ անկումների մասին,
- ✓ ապահովել անասնաբույժների կողմից կենդանիների զննումը, պատվաստումը, ինչպես նաև ախտորոշիչ հետազոտություններ և այլ թեստերի կատարումը,
- ✓ կենդանիների, բեղմնավորիչ նյութերի, կենդանական ծագման հումքի և մթերքի, կերատեսակների տեղափոխումը և իրացումն իրականացնել միայն անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի առկայությամբ,

- ✓ բնակչության վաճառքի համար նախատեսված մսամթերքը իրացնել անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկվելուց և դրանց նորմերին համապատասխանելիության դեպքում,
- ✓ առանց անասնաբուժական ծառայության գրավոր համաձայնության՝ բացառել կենդանիների մորթը և մորթից գոյացած մթերքի և հումքի իրացումը,
- ✓ ապահովել ծրագրի դրույթներով նախատեսված գործունեությունների սանիտարապաշտպանիչ գոտիները։

Արգելվում է.

- ✓ չհամարակալված մթերատու կենդանիների տեղաշարժը կամ տեղափոխումը, որոնց նկատմամբ չեն կիրառվել հակաանասնահամաճարակային տարեկան և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման հրահանգներով սահմանված միջոցառումները.
- ✓ գյուղատնտեսական կենդանիների անհատական ականջանշանների և կամ այլ տեսակի համարակալումների հանումը.
- ✓ առանց անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի առկայության կենդանիների տեղափոխումը.
- ✓ թափոնների հավաքման համար հատուկ հատկացված տեղերում անասնապահությունը կամ կենդանիների բուծումը, կենդանիների կերակրումը.
- ✓ հիվանդ կամ հնարավոր վարակակիր կենդանիների տեղափոխումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն իրականացվում է անասնաբույժի գրավոր ցուցումով կամ լիազոր մարմնի գիտությամբ և թույլտվությամբ.
- ✓ հասարակական արոտավայրերի և ջրելատեղերի օգտագործումը չհամարակալված և (կամ) հակաանասնահամաճարակային տարեկան միջոցառումներում չներառված մթերատու կենդանիների կողմից.
- ✓ խոզերի արոտախոտային աճեցումը.
- ✓ վերամշակված կենդանական ծագման սպիտակուցներով արոտների պարարտացումը.
- ✓ անասնաբուժական դեղամիջոցների կիրառումը անասնաբուժական կրթություն չունեցող անձանց կողմից.
- ✓ կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հրահանգներով արգելված սատկած կենդանիների մաշկազերծումը կամ դիահերձումը կամ այդ հիվանդություններով հիվանդ կենդանիների սանիտարական սպանդը կամ մորթը.
- ✓ անասնաբուժական դեղամիջոցների արտադրության համար նախատեսված ակտիվ և (կամ) այլ նյութերի կիրառումը, որոնք կարող են կիրառվել որպես անասնաբուժական դեղամիջոց.
- ✓ Կենդանական ծագման կողմնակի արտադրանքի տնօրինում (հավաքումը, պահումը, փոխադրումը, իրացումը, վերամշակումը, ոչնչացումը) և (կամ) պահեստավորվում է այնպես, որ երաշխավորվի վերջնական արտադրանքի աամբողջական անվտանգությունը, կանխվեն մարդկանց և կենդանիների առողջությանը սպառնացող վտանգի առկայությունը և շրջակա միջավայրի վարակման հնարավորությունը:
- ✓ կենդանական ծագման մթերքի պահման պայմանների անհամապատասխանության դեպքում՝ իրացման (վաճառքի) կասեցում և նմուշառում՝ լաբորատոր փորձաքննության համար.
- ✓ լաբորատոր փորձաքննության արդյունքում վտանգավոր ճանաչված և (կամ) պիտանիության ժամկետն անցած սննդամթերքի իրացման (վաճառքի) արգելում:

10.10 Սոցիալական գործոններ. ՌԷԳ հաշվետվության շրջանակներում ներկայացվող ծրագրի իրականացումը համայնքի և բնակավայրի համար կունենա սոցիալական դրական ազդեցություն: Այն կնպաստի.

- ✓ ՀՀ-ում խելացի գյուղատնտեսության զարգացմանը՝ արդիականացված տեխնոլոգիաների հենքի վրա:
- ✓ Կխթանի ՀՀ-ում ներդրումների ավելացմանը, որը կնպաստի տարածաշրջանում նոր աշխատատեղերի բացմանը:
- ✓ Կնպաստի տարածաշրջանի բնակչության զբաղվածության աճին, հետևաբար գործազրկության և արտագաղթի նվազմանը:
- ✓ Կնպաստի որակյալ մասմթերքի նկատմամբ բնակչության պահանջարկի բավարարմանը:
- ✓ Կնպաստի համայնքային, ինչպես նաև բնակավայրի բյուջե ֆինանսական հոսքերի ավելացմանը:
- ✓ Հնարավոր բացասական սոցիալական գործոնները կապված են լինելու.
- ✓ Համայնքի աղբավայրի լրացուցիչ ծանրաբեռնվածությանը:
- ✓ Շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունների ավելացմանը, որը կարող է հանգեցնել մարդու առողջության հետ կապված խնդիրների առաջացմանը:

10.11 Լանդշաֆտ, բարեկարգում.կանաչապատում.

Լանշաֆտի պահպանման համար նախատեսվում է.

- ✓ բացառել ՌԷԳ հաշվետվությամբ ներառված տարածքից դուրս կառուցապատման աշխատանքները, լանդշաֆտային փոփոխությունները,
- ✓ հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները:

Բարեկարգում, կանաչապատում. տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- ✓ բարեկարգել ազատ տարածքները, մասնավորապես ազատ տարածքներում նստարանների տեղադրում՝ ազատ ժամերին աշխատողների հանգստի համար:

Կանաչապատում. հնարավորին կանաչապատել տարածքը, ծառերով, խոտածածկ հատվածներով:

Ծրագրի իրականացման ընդհանուր գումարը կազմում է 2 091 192 203 դրամ, որի մեջ ներառված են նաև բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծախսերը՝ 1.320000 դրամ:

Հիմնադրութային փաստաթղթի շրջակներում իրականացվող գործունեությունների ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա (գնահատման -, +, 0 ցուցանիշներով) ամփոփ աղյուսակ:

Հիմնադրութային փաստաթղթով նախատեսված գործունեությունները	Օդային ավազան	Ջրային ռեսուրսներ	կենսաբազմ ազանություն	Հողային ռեսուրսներ	Սոցիալական ոլորտ	Մարդու առողջություն և անվտանգություն
1.Խոզաբուծական համալիրի կառուցում	-	0	0	0	+	-/+
2.Համակցված կերի գործարանի կառուցում	-	0	0	0	+	-/0
3.Խոզաբուծական համալիրի թափոնների չեզոքացման համակարգի կառուցում	-	0	0	-	+	+/-
4. Մաքրման կայանի տեղադրում	+	+	+	+	+	+

11. Շրջակա միջավայրին, այդ թվում՝ բնակչության առողջությանը վերաբերող միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված նպատակները, որոնք վերաբերում են հիմնադրութային փաստաթղթին և այն ուղիները, նկատառումները, որոնք հաշվի են առնվել հիմնադրութային փաստաթուղթը մշակելիս.

Աղյուսակում ներկայացված են բնապահպանական և առողջապահական նպատակները և դրանց կապը ներդրումային ծրագրի նպատակներին և նկատառումներին, որոնք ներառված են հիմնադրույթային փաստաթղթում:

Վերլուծության արդյունքում առաջարկվել են միջոցառումներ ծրագրի առաջարկվող առաջնահերթություններում:

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Ներդրումային ծրագրի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Բնակչությանը բարձրորակ ծառայությունների մատուցում Արդյունավետ և մատչելի սննդամթերքի մատակարարում:	Միասնական/միջազգային կատարողական չափանիշների կիրառում	Նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական աջակցության համայնքի բնակչությանը:	Առավելագույն համագործակցություն մասնավոր և պետական հատվածների հետ	Շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունների կանխարգելում:	
0. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ						
Հետևել անասնապահությանը վերաբերող ազգային կանոնակարգերին	+	-	+	+	+	«Անասնաբուժության մասին» ՀՀ Օրենքը Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին դրույթների ապահովում: 2022 թ. մարտի 3-ին ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» N 276-Լ որոշման պահանջները:
Սահմանել կառավարման, համակարգման և ոլորտային վերահսկողության իրականացման գործում ներգրավված պետական մարմինների և այլ հաստատությունների պարտականությունները	+	+	+	+	+	Պետական տեսչական մարմիններ: Առողջապահության տեսչական մարմին, բնապահպանական տեսչական մարմին: Պետական կառավարման մարմիններ Տեղական ինքնակառավարման մարմիններ, հանրություն:

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Ներդրումային ծրագրի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Բնակչությանը բարձրորակ ծառայությունների մատուցում Արդյունավետ և մատչելի սննդամթերքի մատակարարում:	Միասնական/միջազգային կատարողական չափանիշների կիրառում	Նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական աջակցության համայնքի բնակչությանը:	Առավելագույն համագործակցություն մասնավոր և պետական հատվածների հետ	Շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունների կանխարգելում:	
Միջոցառումներն իրականացնել այնպես, որ կանխվեն և նվազեցվեն մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը	+	+	+	0	+	ՌԷԳ-ում, ՇՄԱԳ-ում նախատեսված շրջակա միջավայրի վրա ազդեցության կանխարգելմանն ուղղված միջոցառումների պարտադիր իրականացում:
1. ՕԴԻ ՈՐԱԿ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐ						
Կրճատել և վերահսկել նախատեսվող օբյեկտներից գազերի արտանետումները մթնոլորտ (օր.՝ այրումից և տեղափոխումից առաջացող արտանետումները, այդ թվում ջերմոցային գազերի արտանետումները)	-	+	+	-	+	Ձեռնարկողը պարտավոր է իրականացնել մոնիթորինգ և կատարել նախատեսված բոլոր միջոցառումները: հանրային իրազեկման միջոցով բարձրացնել հանրության գիտակցությունը, վերահսկելու միջոցառումների կատարումը, որոնք ուղղված են թափոնների կառավարման գործընթացների և օդի որակի, կլիմայի փոփոխության վրա դրանց ազդեցության, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների կանխմանը:
Բարձրացնել հասարակության իրազեկվածությունը թափոնների կառավարման և օդի որակի, կլիմայի փոփոխության վրա դրա	0	0	+	+	+	Պարբերաբար կազմակերպել ստուգայցեր, շահագրգիռ հանրությանը տարածքի շրջակա միջավայրին ծանոթացնելու և հետաքրքրող հարցերը լուսաբանելու նպատակով:

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Ներդրումային ծրագրի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Բնակչությանը բարձրորակ ծառայությունների մատուցում Արդյունավետ և մատչելի սննդամթերքի մատակարարում:	Միասնական/միջազգային կատարողական չափանիշների կիրառում	Նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական աջակցության համայնքի բնակչությանը:	Առավելագույն համագործակցություն մասնավոր և պետական հատվածների հետ	Շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունների կանխարգելում:	
ազդեցության, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ						
2. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ						
Կանխել գործողությունների բացասական ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա	+	+	+	+/-	+/-	Ապահովել նախատեսվող օբյեկտների վերաբերյալ նախատեսված պահանջները՝ ջրի աղտոտումը կանխելու համար: Ապահովել ջրային ռեսուրսների վրա օբյեկտների ազդեցության մոնիթորինգի միջոցառումների կատարումը և դրանով իսկ նպաստել ջրային ռեսուրսների պահպանմանը:
Տարածքում ապահովել մշտադիտարկման համակարգը:	0	0	0	+	+	
3. ՀՈՂ, ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ						
Նախկինում գոմերի համար կառուցապատված հողատարածքների օգտագործումը գյուղատնտեսական	-	+	+	-	+	Նոր հողատարածքների, հատկապես գյուղատնտեսական, հողերի զբաղեցումը հասցվել է նվազագույնի:

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Ներդրումային ծրագրի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Բնակչությանը բարձրորակ ծառայությունների մատուցում Արդյունավետ և մատչելի սննդամթերքի մատակարարում:	Միասնական/միջազգային կատարողական չափանիշների կիրառում	Նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական աջակցության համայնքի բնակչությանը:	Առավելագույն համագործակցություն մասնավոր և պետական հատվածների հետ	Շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունների կանխարգելում:	
արտադրությունների զարգացման տեսանկյունից						Նախատեսվեն միջոցառումներ տարածքի շուրջ երկրաբանական պայմանների (հողօգտագործում, ոռոգում, սողանքներ, անապատացում) մոնիթորինգի համակարգի ստեղծման համար:
Օբյեկտների տարածքների խելամիտ օգտագործումը դրանց փակումից հետո	0	+	-	0	0	
Տարածքի բնապահպանական մոնիթորինգի կազմակերպում (ներառյալ երկրաբանական ռիսկերը, օրինակ՝ սողանքները)	0	0	0	0	0	
4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ						
Հարակից տարածքների կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանությունը (մասնակցային պլանավորման, գիտելիքների կառավարման և կարողությունների զարգացման միջոցով)	-	+/-	+	0	0	Նախատեսել վտանգավոր նյութերի արտանետումների կրճատմանը՝ շրջակա միջավայրի աղտոտումը կանխող և կենսաբազմազանությանն օժանդակող (հող, ջուր, օդ և այլն) նոր տեխնոլոգիաների մեջ ներդրումներ կատարելով, (բ) հողում և ջրում վտանգավոր քիմիական նյութերի կուտակման կանխարգելմանը և (գ)

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Ներդրումային ծրագրի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Բնակչությանը բարձրորակ ծառայությունների մատուցում Արդյունավետ և մատչելի սննդամթերքի մատակարարում:	Միասնական/միջազգային կատարողական չափանիշների կիրառում	Նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական աջակցության համայնքի բնակչությանը:	Առավելագույն համագործակցություն մասնավոր և պետական հատվածների հետ	Շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունների կանխարգելում:	
Կանխել, անհնարինության դեպքում՝ նվազեցնել կենսաբազմազանության վրա ճնշումը և նպաստել դրա կայուն օգտագործմանը	-	+/-	+/-	0	0	լանդշաֆտի դեգրադացիայի կանխարգելմանը: Գործունեությունների հարակից տարածքներում բացառել որևէ գործունեություն Ռազմավարությունը պետք է նախատեսի գյուղատնտեսական հողերի վրա հնարավոր բացասական ազդեցությունների համար փոխհատուցման վերաբերյալ դրույթներ:
5. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ						
Պաշտպանել հարակից տարածքներում բնակվող բնակչության առողջությունը	-	+	+	+/-	+	Ծրագրի գործողություններում ներառվելու է հետևյալ սկզբունքները. • Սահմանել և պահպանել սանիտարական գոտիները • Ապահովել տարածքի սանիտարահիգիենիկ պայմանները • Նախատեսել կենդանիների հիվանդությունների հայտնաբերմանն ուղղված հետազոտական գործողություններ, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումներ
Բնակչության շրջանում հիվանդություններիկանխարգելում	+	+		+	+	

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Ներդրումային ծրագրի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Բնակչությանը բարձրորակ ծառայությունների մատուցում Արդյունավետ և մատչելի սննդամթերքի մատակարարում:	Միասնական/միջազգային կատարողական չափանիշների կիրառում	Նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական աջակցության համայնքի բնակչությանը:	Առավելագույն համագործակցություն մասնավոր և պետական հատվածների հետ	Շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունների կանխարգելում:	
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ …..						
Նպաստել համայնքի Բնակչության կենսամակարդակի աճին	+	0	+	+	0	Աշխատատեղերի բացում
Ռիսկերը հասցնել նվազագույնի	+	+	+	+	+	Բնապահպանական միջոցառումների կատարում

+ ավելի լավ
0 – նույնը
– ավելի վատ
+/– դրական և բացասական կապ

12. Հիմնադրութային փաստաթղթի գործողության ընթացքում ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետնախագծային վերլուծության ծրագիրը.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

ՌԷԳ հաշվետվության դրույթների իրականացման համար հիմք է ծառայում տարածաշրջանի համար առկա ելակետային տվյալները: Վերջինիս բազայի վրա նախատեսվում է մոնիթորինգ՝ ուղղված հիմնադրութային փաստաթղթի գործողության հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա չկանխատեսված ազդեցությունների վերհանմանն և դրանց հետևանքների մեղմացմանը կամ վերացմանը:

Քանի որ հիմնադրութային փաստաթղթով նախատեսվում է գյուղատնտեսության ոլորտի զարգացում, ուստի մոնիթորինգի հիմնական ուղղությունը լինելու է հողային և ջրային ռեսուրսների աղտոտման հավանականությունը և դրանց կանխարգելման ուղղությունների մշակումը: Մոնիթորինգը պետք է ներառի՝

- մոնիթորինգի գործողությունները,
- մոնիթորինգի գործողությունների պատասխանատուն,
- մոնիթորինգի իրականացման ժամկետները և հաճախականությունը,
- մոնիթորինգի արդյունքների ներկայացման եղանակը և ձևաչափը,
- մոնիթորինգի ընթացիկ վիճակը և հնարավոր խոչընդոտները:

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն:
- Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ տվյալ ոլորտի նորմատիվային փաստաթղթերով սահմանված նորմերի խստիվ պահպանման նպատակով:
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ճիշտ կիրառման արդյունքում ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն:

13. Հետնախագծային վերլուծություն.

Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ ձեռնարկողը, իր լիազորությունների շրջանակում իրականացնում է մոնիտորինգ, հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման, և դրա արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունների վերաբերյալ:

Շրջակա միջավայրի, այդ թվում մարդու առողջության վրա չնախատեսված ազդեցությունների ի հայտ գալու դեպքում ձեռնարկողը նախատեսում և իրականացնում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ: Տարին մեկ անգամ մշտադիտարկման արդյունքները հրապարակվում է ձեռնարկողի էլեկտրոնային կայքում:

14. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Օդային ավազան	Օդային ավազան արտանետումները մեղմելու նպտակով նախատեսվում է. ✓ դիակիզարանից և արտադրամասերից, գոմաղբի վերամշակման գործընթացում գազերի, փոշու արտանետումների կանխարգելման ուղղված միջոցառումների կիրառում, ✓ դիակիզարանի խողովակի վրա հսկիչ սարքերի տեղադրում՝ օդային ավազան արտանետումները վերահսկելու նպատակով, ✓ ժամանակակից ֆիլտրերի կիրառում՝ օդային ավազան արտանետումների քանկական և որկական ցուցանիշները մեղմելու նպատակով, ✓ Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (ԱՕՊ) ժամանակահատվածում (քամու արագություն, փոթորիկ) աշխատանքների վերահսկում, անհրաժեշտության դեպքում դադարեցում:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

2	**Հողային ռեսուրսներ**	Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. ✓ գոմաղբի վերամշակման և վնասազերծման ընթացքում առաջացող հոսքաջրերի հողային ռեսուրսների ուղղորդման բացառում, ✓ մաքրման կայանի տեղադրում՝ հողային ռեսուրսները կեղտաջրերով աղտոտելուց խուսափելու համար:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	**Համայնք** **Համապատասխան գերատեսչություններ ի տեսչական մարմիններ**
3	**Ջրային ռեսուրսներ.**	Ջրային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. ✓ գոմաղբի վերամշակման և վնասազերծման ընթացքում առաջացող հոսքաջրերի ներթափանցման բացառում ջրային ռեսուրսներ: ✓ մաքրման կայանի կառուցում հողային և ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հոսքը կանխելու նպատակով, ✓ բացառել արտադրական և կենցաղային նպատակներով օգտագործվող հոսքաջրերի բաց թողումը շրջակա միջավայր, ✓ գոմաղբի վերամշակման և վնասազերծման ընթացքում առաջացող հոսքաջրերի մաքրումն իրականացնել մաքրման կայանների միջոցով՝ կեղտաջրերի ներծծումը գրունտային ջրեր բացառելու նպատակով, ✓ մաքրված հոսքաջրերի ուղղորդված օգտագործում՝ ոռոգման նպատակով:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	**Համայնք** **Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ**
4.	**Կենսաբազմազանություն.**	Գործունեության իրականացման հետևանքով կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու համար նախատեսվում է.	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	**Համայնք** **Համապատասխան գերատեսչությունների**

		✓ գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին, ✓ հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:		**տեսչական մարմիններ**
5.	**Թափոններ.**	Գործունեության իրականացման հետևանքով թափոնների հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու համար նախատեսվում է. ✓ գոմաղբի վերամշակման, վարակազերծման գործընթացների ապահովում՝ ժամանակակից ազդանյութերի/ռեագենտների/ միջոցներով, ✓ գոմաղբի նախնական մաքրման՝ մանրաէազերծման եղանակի կիրառում՝ գոմաղբին բնորոշ հոտից խուսափելու համար, ✓ կենդանիների մորթից և անկումից առաջացած մնացորդների վնասազերծում՝ այրման վառարանների միջոցով՝ հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից խուսափելու համար, ✓ վերամշակումից առաջացած մոխիրը և կենցաղային աղբը տեղափոխել աղբավայր, քանի որ տարածաշրջանում չկան աղբավերամշակման գործարաններ:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	**Համայնք** **Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ**

		✓ կենցաղային աղբի համար նախատեսել աղբամաններ, ինչպես նաև տեսակավարոման աղբամաններ:		
6.	Արտակարգ իրավիճակներ.	Արտակարգ իրավիճկները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել. ✓ գոմերում նախատեսել օդափոխման և միկրոկլիմայի պահպանման համակարգ, ✓ հրաշիջման համակարգերի, հակահրդեհային հիդրանտների տեղադրում, ✓ հրդեհամարման բաքերի կիրառում՝ ներքին հրդեհների մարման նպատակով, ✓ նախատեսվող շինությունների համար նախատեսել հողանցում և շանթապաշտպանություն, ✓ ապահովել էվակուացիոն ելքերով՝ մարդկանց և կենդանիների համար, տարածքում փակցնել պաստառներ կամ ցուցանակներ:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ
7.	Աղմուկ և թրթռում	Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է. ✓ արատադրությունում և տարածքում կիրառել ձայնակլանիչ նյութեր և կոնստրուկցիաներ, ✓ արտադրությունում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ✓ տեխնիկայի և մեքենաների համար կիրառել համապատասխան խլացուցիչներ, ✓ պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

8.	**Պատմամշակութային հուշարձաններ**	Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվող տարածքներում Պատմամշակութային և բնության հուշարձանները բացակայում են, միաժամանակ ծրագրի դրույթների իրականացման ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ
9.	**Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն**	Աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է. ✓ տեխնոլոգիայի մշակման համար օգտագործել ՀՀ սանիտարական, տեխնոլոգիական և անասնաբուժական նորմերը և ԵՄ ստանդարտները, ներառյալ կենդանիների բարեկեցության ստանդարտները (welfare standards), ✓ առաջատար ավտոմատ սարքավորումների, անասունների խմելու և կերակրման ավտոմատ համակարգի կիրառում, ✓ գոմաղբի վարակազերծում՝ մանրէաբանական,	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ	Համյանք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		մեխանիկական և կենսաբանական եղանակներով, ✓ կենդանիների հետ մարդկանց նվազագույն շփում, համապատասխան արտահագուստով, դիմակով, ձեռնոցներով ապահովում, ✓ աշխատանքի ասանիտարահիգենիկ պայմանների ապահովում, վարակազերծման միջոցներ: ✓ պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, ✓ նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, ✓ անասնաբուժական ծառայությանն անհապաղ տեղեկացնել կենդանիների հանկարծակի և զանգվածային հիվանդացության կամ անկումների մասին, ✓ ապահովել անասնաբույժների կողմից կենդանիների զննումը, պատվաստումը, ինչպես նաև ախտորոշիչ		

		հետազոտություններ և այլ թեստերի կատարումը, ✓ կենդանիների, բեղմնավորիչ նյութերի, կենդանական ծագման հումքի և մթերքի, կերատեսակների տեղափոխումը և իրացումն իրականացնել միայն անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի առկայությամբ, ✓ բնակչության վաճառքի համար նախատեսված մսամթերքը իրացնել անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկվելուց և դրանց նորմերին համապատասխանելիության դեպքում, ✓ առանց անասնաբուժական ծառայության գրավոր համաձայնության՝ բացառել կենդանիների մորթը և մորթից գոյացած մթերքի և հումքի իրացումը։ ✓ Ապահովել ծրագրի դրույթներով նախատեսված գործունեությունների սանիտարապաշտպանիչ գոտիները։ Արգելվում է. ✓ չհամարակալված մթերատու կենդանիների տեղաշարժը կամ տեղափոխումը, որոնց նկատմամբ չեն կիրառվել հակաանասնահամաճարակային տարեկան և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման և		

		վերացման հրահանգներով սահմանված միջոցառումները. ✓ գյուղատնտեսական կենդանիների անհատական ականջանշանների և կամ այլ տեսակի համարակալումների հանումը. ✓ առանց անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի առկայության կենդանիների տեղափոխումը. ✓ թափոնների հավաքման համար հատուկ հատկացված տեղերում անասնապահությունը կամ կենդանիների բուծումը, կենդանիների կերակրումը. ✓ հիվանդ կամ հնարավոր վարակակիր կենդանիների տեղափոխումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն իրականացվում է անասնաբույժի գրավոր ցուցումով կամ լիազոր մարմնի գիտությամբ և թույլտվությամբ. ✓ հասարակական արոտավայրերի և ջրելատեղերի օգտագործումը չհամարակալված և (կամ) հակաանասնահամաճարակային տարեկան միջոցառումներում չներառված մթերատու կենդանիների կողմից. ✓ խոզերի արոտախոտային աճեցումը.		

		✓ վերամշակված կենդանական ծագման սպիտակուցներով արոտների պարարտացումը. ✓ անասնաբուժական դեղամիջոցների կիրառումը անասնաբուժական կրթություն չունեցող անձանց կողմից. ✓ կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հրահանգներով արգելված սատկած կենդանիների մաշկազերծումը կամ դիահերձումը կամ այդ հիվանդություններով հիվանդ կենդանիների սանիտարական սպանդը կամ մորթը. ✓ անասնաբուժական դեղամիջոցների արտադրության համար նախատեսված ակտիվ և (կամ) այլ նյութերի կիրառումը, որոնք կարող են կիրառվել որպես անասնաբուժական դեղամիջոց. ✓ Կենդանական ծագման կողմնակի արտադրանքի տնօրինում (հավաքումը, պահումը, փոխադրումը, իրացումը, վերամշակումը, ոչնչացումը) և (կամ) պահեստավորվում է այնպես, որ երաշխավորվի վերջնական արտադրանքի ամբողջական անվտանգությունը, կանխվեն մարդկանց և կենդանիների առողջությանը սպառնացող վտանգի		

		առկայությունը և շրջակա միջավայրի վարակման հնարավորությունը: ✓ կենդանական ծագման մթերքի պահման պայմանների անհամապատասխանության դեպքում՝ իրացման (վաճառքի) կասեցում և նմուշառում՝ լաբորատոր փորձաքննության համար. ✓ լաբորատոր փորձաքննության արդյունքում վտանգավոր ճանաչված և (կամ) պիտանիության ժամկետն անցած սննդամթերքի իրացման (վաճառքի) արգելում:		
10.	**Սոցիալական գործոններ.**	ՌԷԳ հաշվետվության շրջանակներում ներկայացվող ծրագրի իրականացումը համայնքի և բնակավայրի համար ունենալու է սոցիալական դրական ազդեցություն: Այն կնպաստի. ✓ ՀՀ-ում խելացի գյուղատնտեսության զարգացմանը՝ արդիականացված տեխնոլոգիաների հենքի վրա: ✓ Կխթանի ՀՀ-ում ներդրումների ավելացմանը, որը կնպաստի տարածաշրջանում նոր աշխատատեղերի բացմանը: ✓ Կնպաստի տարածաշրջանի բնակչության զբաղվածության աճին, հետևաբար գործազրկության և արտագաղթի նվազմանը: ✓ Կնպաստի որակյալ մսամթերքի նկատմամբ բնակչության պահանջարկի բավարարմանը: ✓ Կնպաստի համայնքային, ինչպես նաև բնակավայրի բյուջե ֆինանսական հոսքերի ավելացմանը ✓ Հնարավոր բացասական սոցիալական	**«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ**	**Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ**

		գործոնները կապված են լինելու. ✓ Համայնքի աղբավայրի լրացուցիչ ծանրաբեռնվածությանը։ ✓ Շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունների ավելացմանը, որը կարող է հանգեցնել մարդու առողջության հետ կապված խնդիրների առաջացմանը։		
11.	**Բարեկարգում, լանդշաֆտ.կանաչապատում.**	Լանշաֆտի պահպանման համար նախատեսվում է. ✓ բացառել ՌԷԳ հաշվետվությամբ ներառված տարածքից դուրս կառուցապատման աշխատանքները, լանդշաֆտային փոփոխությունները, ✓ հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները։ **Բարեկարգում, կանաչապատում**. տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է. ✓ բարեկարգել ազատ տարածքները, մասնավորապես ազատ տարածքներում նստարանների տեղադրում՝ ազատ ժամերին աշխատողների հանգստի համար։ Կանաչապատում. հնարավորինս կանաչապատել տարածքը, ծառերով, խոտածածկ հատվածներով։	**«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ**	**Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ**

15. Մոնիթորիգի (մշտադիտարկում) պլան

Աղյուսակ 12

Գործողություններ	Մոնիթորինգի վայրը, պարբերականությունը (ժամանակամիջոցը),	Մոնիթորինգի եղանակը, ձևը	Ծրագրի դրույթներին համապատասխան Մոնիթորինգի Պատասխանատու, Վերահսկող
1.Օդային ավազան արտանետումների մեղմում՝ օդի աղտոտումը կանխելու նպատակով (փոշի, ծխագազեր)	Ծրագրի շրջանակներում նախատեսված տարածք Շաբաթը 1 անգամ՝	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում չափագրում՝ համապատասխան մասնագետի կողմից:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
2.Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ հողի աղտոտումը կանխելու նպատակով	Ծրագրի շրջանակներում նախատեսված և հարակից տարածք Պարբերաբար՝	Տեսողական ուսումնասիրություն:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ Համայնք
3.Կենսաբազմազանության ուսումնասիրություններ՝ կից տարածքում ՀՀ Կաարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների հայտնաբերման նպատաով:	Ծրագրի շրջանակներում նախատեսված և հարակից տարածք: Մինչև ծրագրով նախատեսված դրույթների իրականացումը:	Մասնագիտական ուսումնասիրություն անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետի ներգրավում:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ
4. Մարդու առողջություն և անվտանգություն	Ծրագրով նախատեսված դրույթների իրականացման ընթացքում: Ամենօրյա:	Համապատասխան մասնագետների այցելություններ:	«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին

5.Սոցիալական գործոններ	Ծրագրով նախատեսված դրույթների իրականացման ընթացքում: Համայնքի հետ համաձայնեցված պայմանագրերով:	Կանոնավոր սոցիալական պարտավորությունների կատարում՝ ամրագրված համայնքի հետ կնքված պայմանագրում:	**«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ** Համայնք

16.Գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, տեխնիկական թերությունների, դժվարությունների՝ ներառյալ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

Գնահատումները կատարվել են հիմք ընդունելով միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության պահանջները, գյուղատնտեսության զարգացման ծրագրի ՌԷԳ իրականացումը լուծեց մի շարք խնդիրներ, նպաստեց ինստիտուցիոնալ և իրավական ոլորտներին վերաբերող նպատակների վերլուծությանը և բացահայտմանը:
Մասնավորապես՝

- Վեր հանվեցին զարգացման ծրագրի հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, և առաջարկվեցին լուծումներ՝ դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված:
- - ՌԷԳ գործընթացում վեր հանված առաջարկությունները և միջոցառումները հնարավոր կլինի իրականացնել ծրագրային փաստաթղթի ներդրման ընթացքում, և նպաստել դրանց աստիճանական լուծմանը:
- Գործընթացի ամենավաղ փուլերում համայնքը և համայնքի ավագանին ներգրավված է ծրագրի նախապատրաստման գործընթացում, և հնարավորինս հաշվի առնվեց հանրության կարծիքը:

Տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները: Հանրապետության առողջապահական ոլորտում բնակչության թիրախային խմբերի հիվանդացության վերլուծություններ չեն իրականացվում, բնակչության թիրախային խմբերում հիվանդացության և գործոնների միջև պատճառահետևանքային կապը հաստատող հետազոտություններ և/կամ մշտադիտարկումներ չեն իրականացվում, ինչը մարդու առողջության վրա ազդեցությունների գնահատման առումով համապարփակ չի կարող իրականացվել:
Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգը դեռևս լիարժեք չի երաշխավորում բնակչության առողջության համար սննդային գործոնով պայմանավորված բացասական ներգործության կանխարգելումը և այդ առումով առկա են մի շարք լուծում պահանջող հիմնահարցեր: Հետևաբար, անհրաժեշտություն կա այդ բնագավառը կարգավորող միասնական քաղաքականության մշակում և իրականացում:

17. Տեղեկատվություն հանրության ծանուցման, քննարկումների արդյունքների, գրավոր կամ բանավոր ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, կարծիքների, դրանց ընդունման կամ չընդունման հիմնավորումների վերաբերյալ:

«Իջևանյան Բեկոն» ՍՊԸ-ի կողմից համայնքին և հանրությանը ներկայացվել է Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում արդիական տեխնոլոգիաներով հագեցած խոզաբուծարանի հիմնման ներդրումային ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը: Իրականացվել է քննարկում, ծանոթացրել են՝ համայնքի և Մայիսյան բնակավայրի բնակիչներին, նախատեսվող ներդրումների, նպատակի, վերջինիս դրույթների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, սոցիալական

դրական և հնարավոր բացասական ազդեցությունները:

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից , հիմք ընդունելով «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի 2024թ, մարտի 7-ի N O1/12/13O գրությունը՝ Արմավիր համայնքի ավագանին տվել է համաձայնությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 059-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽՈԶԱԲՈՒԾԱՐԱՆԻ ՀԻՄՆՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի 2024 թվականի մարտի 7-ի N 01/12/130 գրությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Տալ համաձայնություն «Իջևանյան Բեկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում արդիական տեխնոլոգիաներով հագեցած խոզաբուծարանի հիմնման ներդրումային ծրագրին՝ համաձայն հավելվածի:
2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ իրականացնելու սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:
3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՏԻՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. ապրիլի 26
ք. Արմավիր

Քննարկումների արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքի ավագանու կողմից հավանություն է տրվել ծրագրի իրականացմանը:

Հաշվետվությունում ներառված տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները.

1. Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագիր:
2. «ԱՐՄԱՎԻՐ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը:
3. ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթ:
4. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք /https://armstat.am/:
5. ՀՀ ՇՄՆ «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայք:
6. «Աղմուկն աշխատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարակն նորմերը

հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամաններ։

7. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»։
8. ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման։
9. ՀՀՇՆ 31-04.01-2024 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ։
10. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամաններ։
11. Առողջապահության Ազգային Ինստիտուտի 2023թ. տեղեկագիր։